School of Theology at Claremont
1001 1398952

The Library

SCHOOL OF THEOLOGY
AT CLAREMONT

WEST FOOTHILL AT COLLEGE AVENUE
CLAREMONT, CALIFORNIA

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՊՕՂՈՍԻ (ՓՕԼ) Է. ՄՈՎՍԷՍԵԱՆ

ՍԻՐԱԶԵՂ ՆՈՒԻՐԵՆ

ԿՈՂԱԿԻՑ ԵՒ ԶԱՒԱԿՈՒՆՔ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՑՆ

TO THE MEMORY

-Of-

PAUL A. MOSESIAN

AFFECTIONATELY DEDICATED

-By-

HIS WIDOW AND CHILDREN

ՓՕԼ ԷԿՕԲ ՄՈՎՍԷՍԵԱՆ

PAUL A. MOSESIAN

1871—1929

The

Most Rt. Rev. Bishop B. W. Stevens

With most affectionate brotherly love and remembrance to your Grace, the most Rt. Rev. Bishop B. W. Stevens.

By

Bishop Hovsep Garabedian

March 18. 1938

L. A.

Copyright

1932

By REV. THEOD. ISAAC

All Rights Reserved

ՕՐՀՆԱԳԻՐ

Համար—524|192 Ֆրէզնօ, 1 Դեկտ. 1931

Արժանաշնորհ

Տ. Թէոդորոս Աւագ քահանայ Խսահակեան, Վ. Ա.
(Զուղայեցի)

Ֆրէզնօ, Գալիֆ.

Արժ. սիրելի ի Քրիստոս.

Առաջնորդարանիս փափաքին եւ յանձնարարութեան համաձայն եւ հանգ. Պ. Մովսէսեանի ընտանեաց նիւթական օժանդակութեամբ հրապարակ հանելով, նոր եւ բազմաբովանդակ տպագրութեամբ եւ հայերէն բնագրին հետ ձեռնհասօրէն կատարուած անգլիերէն թարգմանութեամբ, Հայաստանեայց Եկեղեցւոյ «*Խորհրդատետր*»ը կամ «*Պատարագամատոյց*»ը, դուք կը մատուցանէք բարձրօրէն գնահատելի ծառայութիւն մը ալ, նախ՝ եկեղեցւոյն եւ ապա ու մանաւանդ՝ այդ եկեղեցւոյ զաւակ անգլիախօս նոր սերունդին։

Աւետարանի կենդանի ոգին եւ Քրիստոնէական գեղարուեստի հայեցի շունչը՝ կրօնական խորհրդազգացութեամբ և երկնային նառագայթներով են ընդելուզուած այս Ս. Խորհրդատետրին մէջ։ Աստուածային անարիւն զոհին գաղափարական թրթռացումներն են որ կը պատկերացնեն հոն խորհուրդը սշխարհի փրկագործութեան։ Մարդկային հոգին, ըլլայ ան փորձառութեամբ ակաղձուն ծերին թէ անփորձ ու փորձութեանց ծովին վրայ մարտնչող երիտասարդին մէջ, այս ոսկեմատենիկէն ներս պիտի *կրնայ* գտնել վերնիտ ակնաղբիւրը բարձրագոյն ներշնչումներու եւ խորագոյն ապրումներու։ Այս կարելիութիւնը, սակայն, պայմանաւորուած է բարոյական արիութեան հետ լծորդ այն *հաւատաւոր կամեցողութեամբ*, որով այդ հոգին կը յաջողի թօթափել իր

վրայէն սեղմող ու խեղդող կապանքները դարուս ու միջա-
վայրիս ծայրայեղօրէն նիւթապաշտ-մեքենապաշտ ձգտումնե-
ներուն։

Երանի՜ թէ Ձեր՝ յօրինողիդ եւ մեր իղձն ու առաջադը-
րութիւնը գտնէին իրենց իրականացումը, այս գիրքէն՝ Աս-
տուծոյ օրհնութեան ցօղին հետ աղօթքի փոքր ինչ վերացը-
նող շող եւ երգի մի քիչ սրբազան դող կաթեցնելով հոգեւոր
շինութեան, վերածնութեան եւ խաղաղութեան կարօտ մեր
սիրելի համայնքին եւ երիտասարդութեան հոգւոյն, մտքին
եւ սրտին մէջ։

Սէր և օրհնութիւն՝ աշխատաւոր մշակիդ, վաստակիդ
սատարողներուն եւ զայն վայելողներուն։

Գոհութիւն եւ փառք բաշխողին անսպառ շնորհաց։

Աղօթակից

Առաջնորդ Հայոց Գալիֆոռնիոյ

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ՏՐԱՊԻԶՈՆԻ

A Word of Blessing

ARMENIAN PRELACY
of
CALIFORNIA

No. 524|192

Fresno, California.
December 1, 1931

Rev. Theodoros Archpriest Isaac, Lic. D.
(of Choogha)
Fresno, California.

Rev. Beloved in Christ:

In accordance with the wishes and recommendations of our Prelacy and the financial assistance rendered by the family of the late Paul A. Mosesian, with the publication of this new and multipartite Missal of the Church of Armenia, both in the Armenian text and the carefully rendered English version, you have rendered a highly appreciable service, first to our Church then especially to the English speaking youth of our Church.

The living spirit of the Gospel and the Armenian breath of Christian Fine Arts, namely music, are interlaced in this Book of Liturgy with religious mysticism and heavenly radiance. The idealistic vibrations of the Divine and Bloodless Sacrifice portrays therein the Sacramental mystery of the Redemption of the world. The human soul, be it either in the old, full of experience, or in the experienced youth struggling on the sea of temptations, will be able to find within this Golden Book, the limpid source of the highest inspirations and deepest meditations. This possibility, how-

ever, is conditioned with the believing will in conjunction with a moral fortitude by which that spirit succeeds to shake itself from the constringent and strangling chains imposed by the excessive materialistic and mechanistic tendencies peculiar to our age and general environment.

May it be, that your wishes and purpose, and our own, find a realization through the dripping of this Book of a few exalting beams of prayer and a few sacred tremors of song together with the dew of God's benediction, into the souls, minds and hearts of our beloved people and youth, who are greatly in need of spiritual edification, renaissance and peace.

May love and blessing rest upon yourself the faithful worker, upon those who have helped the work and those who will enjoy it.

Thanks and glory to Him who dispenseth inexhaustible grace.

Prayerfully yours

BISHOP KH. KAREKIN
of Trebizond

Prelate of the Church of Armenia
in California, U. S. A.

TRANSLATED BY BISHOP KH. KAREKIN

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

MISSAL

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

կամ

ԲՈՒԼՈՒԹԵՏՈՒ ՍՈՒՐԲ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԸՍՏ ԾԻՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Դասաւորեալ, եւ թարգմանեալ յանգլիական բարբառ,

հանդերձ ձայնագրութեամբ երգոց Ս. Պատարագի

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

ՏԷՐ ԹԷՈԴՈՐՈՍ ՏԷՐ ԻՍԱՀԱԿԵԱՆ, Վ. Ա.

(Ամբարչեանց)

ԽԱՉԱԿԻՐ-ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ

Յանձնարարութեամբ Քալիֆորնիոյ Առաջնորդութեան

Կրօնական Ժողովոյ

ՖՐԷԶՆՕ

«ԱՍՊԱՐԷԶ» ՏՊԱՐԱՆ

1932

BX
27
A4
1932

The Missal

—Or—

The Divine Liturgy

According to the rite of the Church of Armenia.

Arranged and translated into English,

together with the music of the melodies sung at Mass.

-By-

THEODOROS ISAAC, Lic. D.

Archpriest

With the approval of the Ecclesiastical Synod of the

Armenian Diocese of California.

FRESNO

All Rights Reserved.

1932

THE ... LIBRARY
CLAREMONT, CALIF.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ամերիկահայ գաղութը քրիստոնէական առաքելութեան նոր ասպարէզ մը բացած է Հայաստանեայց Եկեղեցւոյ առջեւ։ Դարերէ ի վեր մոռացութեան տրուած՝ Աւետարանը տարածելու Քրիստոսաւանդ պատգամը ուժգնօրէն կը հնչէ մեր ականջին այս երկրին մէջ, այն ալ ոչ թէ հեթանոս ազգաց քարոզելու համար, այլ այստեղ մեծցող մեր արենակից նոր սերունդին, որ հետզհետէ կը զարգանայ եւ կ՚ստուարանայ, սակայն առանց ազգային կատարեալ գիտակցութեան, եւ ամերիկեան զօրաւոր հոսանքներէն մղուած՝ օրըստօրէ կ՚օտարանայ բնատոհմիկ աւանդութիւններէն, որով շաղախուած է մեր սուրբ կրօնը։ Սակայն եկեղեցին պէտք չէ որ ընկճի այսպիսի օտարացուցիչ ազդեցութեանց առջեւ։ Անիկա պէտք է շարունակէ իր աւետարանական գործունէութիւնը ամէն հանգամանքի ներքոյ։ Այլեւս պէտք չէ անտեսել այն իրողութիւնը՝ որ այսօր իսկ մեր ամերիկահայ գաղութներուն մէջ հայագէտները փոքրամասնութիւն կը կազմեն, եւ ստուգօրէն մեզ յաջորդող սերունդը բոլորովին անդլիախօս պիտի դառնայ։ Այս անխուսափելի կացութեան հանդէպ, իմաստութիւն չէ «ին երազներով տարուիլ, կամ «ընդդէմ խթանի աքացելով» Աւետարանի առաքելութեան գործը բարձի թողի ընել։ Եթէ կ՚ուզենք այս նոր սերունդը Հայաստանեայց Եկեղեցւոյ փարախին մէջ պահել, պէտք է անոր հետ իր հասկցած լեզուաւը խօսիլ, և Աւետարանը ըստ կարելւոյն անոր մտայնութեան եւ ճաշակին յարմար ձեւովը ներկայացնել։ Ներկայ

հրատարակութիւնը սոյն նպատակին ծառայելու դուզնաքեայ փորձ մըն է։

Սուրբ Պատարագն՝ իբրեւ փրկագործութեան իւրացման միջոց, եւ մեր Փրկչէն իսկ հաստատուած եւ իւր աշակերտաց պարտադրուած խորհուրդ՝ բնականաբար առաքելական դարէն սկսեալ քրիստոնեայ համայնքներու մէջ առհասարակ ամենէն նուիրական հանրային պաշտամունքը նկատուած է։ Այս պատճառաւ բոլոր հին եկեղեցիներու պատարագամատոյցները միմեանց հետ սերտ առընչութիւն ունին. էական մասերը ամենու մէջ համանման են, եւ միայն տեղական հանգամանքով եւ երկրորդական ծիսակատարութեամբ իրարմէ անկախ։ Սոյնպէս եւս մեր պատարագը, որ դարերու ընթացքին բազմաթիւ բառական եւ ծիսական փոփոխութիւններ կրած է, էապէս պահպանած է առաքելական դրոշմը եւ մեր ազգի Լուսաւորիչ Ս. Գրիգորի աւանդութիւնը։

Ներկայ հրատարակութեան նպատակն երկու է։ Նախ՝ բարեպաշտ ժողովրդեան դիւրամատչելի ընել լիակատար եւ միանգամայն դիւրատար Ս. Պատարագի աղօթագիրք մը, որ պարունակէ ամէն ինչ որ Ս. Պատարագի միջոցին կը կատարուի լրոնելեայն կամ բարձրաձայն. աղօթք, երգ, սաղմոս եւայլն, թէ սովորական պաշտամանց եւ թէ արտասովոր եւ թէ հանդիսաւոր առիթներով կատարուելիքները, ի բաց առեալ ճաշոց գրքի մէջ արդէն ամփոփուած՝ Ս. Գրոց ընթերցուածները եւ մի քանի երկարաբան աղօթքներ ու ճառեր, որոնք մատեանս ստուարացնելն մեր նպատակէն դուրս եւ աւելորդ համարուեցաւ։ Երկրորդ՝ ամերիկահայ անգլիախօս կամ գրաբառը չհասկացող մեր եկեղեցւոյ զաւակաց՝ Ս. Պատարագի խորհուրդը հասկանալու եւ գիտակցաբար պաշտելու դիւրութիւն ընծայել։

Այս թարգմանութեանց մէջ ջանացած ենք պարզ՝ այլ անգլիական եկեղեցական լեզուաւ արտայայտուիլ, հետեւելով ըստ կարելւոյն անգլիական Աստուածաշունչի եւ Անկլիկան եկեղեցւոյ հանրային պաշտամանց աղօթագրքի ոճին: Հայերէն բնագիրն առնուած է ի Ս. Էջմիածին 1880-ին տպագրեալ խորհրդատետրէն, հանդերձ բաղդատութեամբ ի Ս. Երուսաղէմ 1927-ին հրատարակեալ պատարագամատոյցին: Իսկ շարականները եւ սաղմոսներն առնուած են նոյնպէս Ս. Երուսաղէմի տպագրուածներէն:

Սաղմոսներու անգլիերէնը առած եմ Անգլիական Աստուածաշունչէն, որ ուղղակի եբրայականէն թարգմանուած ըլլալով՝ թէ բառերու եւ թէ իմաստի տեսակէտով տեղտեղ կը տարբերի մերինէն, որ առնուած է Եօթանասնից թարգմանութենէն. եւ որովհետեւ թէ մերը եւ թէ անգլիերէնը յաճախ գործածութեամբ այլեւս տարբացած են երկու եկեղեցեաց եւ ազգաց մէջ՝ դուն ուրեք բառ մը փոխած կամ տեղափոխած եմ խրթնութիւնը փարատելու կամ երկոքին թարգմանութիւնք մասամբ համաձայնեցընելու համար:

Դիւրութեան համար մատեանս երեքի բաժնուած է: Առաջինը կը պարունակէ Ս. Պատարագի սովորական ասացուածները, որ ամէն ժամանակ կը կատարուին. երկրորդը՝ ըստ պատշաճի աւուր փոփոխական երգելիքները, ինչպէս, մեղեդի, սըրբասացութիւն, ճաշու սաղմոս, շարական եւայլն: Այս երկրորդ մասին մէջ դրուած են նաեւ Ս. Պատարագի հետ առընչութիւն ունեցող պատահական կարգեր, ինչպէս, հանդիսաւոր վերաբերում, հոգեհանգիստ, ջրօրհնէք, խաղողի օրհնութիւն եւայլն: Ի վերջոյ աւելցուած է ընդհանուր խոստովանութեան համառօտ կարգ մը, եւ Ս. Հաղորդու-

թեան ի պատրաստութիւն՝ տպաշխարանաց սաղմոսք, Տէր Ամենակալ եւ Հաւատով Խոստովանիմ աղօթքը։

Իսկ երրորդ մասն կը պարունակէ Ս. Պատարագի գլխաւոր երգերի եւրոպական ձայնագրութեամբ ներդաշնակեալ եղանակներն, զորս համառօտած եմ Ամենայն Հայոց Կաթուղիկոսէն յանձնարարեալ եւ արդէն ամերիկահայոց մէջ սովորաբար գործածուած՝ Եկմալեանի հրատարակութենէն։ Այս մասին մէջ հայերէն բառերէն զատ նօթայի ներքեւ գրուած է արեւմտեան հնչումներով հայերէն բառերի արտասանութիւնը անգլիական գրերով ի դիւրութիւն հայերէն կարդալ չգիտցող երգեցողաց։ Բացառաբար աւելցուած է՝ Քալիֆորնիոյ եկեղեցեաց մէջ յաճախ երգուած Տէր ողորմեայի եղանակ մը, որ առնուած է գերմանացի երաժիշտ Հէնտելի Յուդաս Մակաբայեցի սրբազան թատերգութենէն, որ թէպէտեւ սկզբնապէս յաղթական երգի մը եղանակն է, սակայն ծանր եւ աղերսական առոգանութեամբ Տէր ողորմեային յարմարցուած է։ Յիշատակութեան արժանի է որ այս փոքրիկ երգը առաջին նմոյշն է մեր եկեղեցւոյ մէջ եւրոպական երաժշտութեան՝ փոխ առնուած անուանի երգահանի մը շարադրածէն եւ, չենք գիտեր որո՛ւ կողմէ, ներմուծուած այս նահանգի Հայ եկեղեցեաց մէջ։

Վերջին տարիներ շատ խօսուեցաւ եւ գրուեցաւ եկեղեցական բարեկարգութեան կամ բարեփոխութեան շուրջ, եւ եկեղեցական պաշտամանց ընդհանրապէս, եւ Ս. Պատարագի արարողութեան ի մասնաւորի, կրճատումն կամ թեթեւացումն եւ ժողովրդականացումն՝ կարեւորներէն մին կը համարուի։ Անձնապէս պիտի սիրէի ջնջուած տեսնել բոլոր լռելեայն աղօթքներ, օրհնեա Տէրեր, աւելորդ

ամեններ, ալելուիաներ, Տէր ողորմեաներ. ծանր ստեղիներու տեղ թեթեւ եւ պարզ եղանակներով երգեր դնել՝ ժողովուրդին միաբերան երգել սորվեցնել, եւ մանաւանդ՝ ամէն պաշտամունք եւ կարգ ժողովուրդի հասկցած լեզուաւը կատարել։ Եկեղեցւոյ բարեփոխութեան խնդիրներու մէջ մենք կրնանք անհատաբար առաջարկներ եւ թելադրութիւններ ընել. սակայն 1600 տարիներու կազմակերպեալ եկեղեցւոյ կարգ ու կանոնը բարեփոխելու եւ արդիացնելու գործը՝ Հայաստանեայց Եկեղեցին ներկայացնող ընդհանրական ժողովի մը կը պատկանի։

Քալիֆորնիոյ Առաջնորդութեան կրօնական ժողովը երկու եւ կէս տարի յառաջ ինձ յանձնարարած էր մեր պատարագի անգլիական թարգմանութիւն մը պատրաստել. եւ այն ատեն պզտիկ փորձ մ'եւս ըրի Ս. Ներսէս Շնորհալիի Հաւատով Խոստովանիմ աղօթքի երկլեզուեան հրատարակութեամբը։ Սակայն տպագրական ծախուց անապահովութիւնը զիս կասեցուց՝ մեծագոյն գործը աւելի թափով յառաջ տանելու։ Ուստի հիմա որ երկնային օժանդակութեամբ այս սուրբ ձեռնարկն ի կատար հասած է, պարտք կը զգամ մասնաւորապէս շնորհակալութիւն յայտնել հանգուցեալ Փօլ է. Մովսէսեանի ընտանեաց, որոց առատաձեռնութեամբ այս հրատարակութիւնը հնարաւոր եղած է։

Եթէ Պատարագամատոյցիս հրատարակութիւնը ծառայէ որեւէ կերպիւ մեր ազգի զաւակաց բարեպաշտութեան եւ հոգեւոր մխիթարութեան խրթան ըլլալու, թարգմանիչս ինքզինքն լիուլի վարձատրուած պիտի համարի։

Թ. Քէշ.

PREFACE

The Church of Armenia on the American continent is at present faced by a long-forgotten and yet, in some respects, a new missionary problem, which concerns the evangelization, not of the gentiles, but of the children of our own kin and race. Owing to the circumstances of education and language, the American-born Armenians, as well as those of our people who have emigrated in childhood, are gradually drifting away from the benign influence of their mother-church and of those national traditions which have been, for centuries, identified with the church itself. Now, the problem before us is, either to break off partly from those old traditions of language and custom, and present the claims of our church in a more acceptable form to this new generation of Armenians in this country, or to allow this new generation to pass out of existence, as far as their adherence to the religion of their forefathers and to their national heritage is concerned, and in the near future close the doors of our churches on this hemisphere. This latter course, we are obviously not prone to take. There is, therefore, no alternative for us but to tackle the problem in a new and unprejudiced spirit, and more or less in conformity with the methods and practices in vogue in this our adopted country. This book is intended to be an effort and a first-step in that direction.

The holy Eucharist, or the service of the holy Communion, which was ordained by Christ himself as

a means of uniting his followers with himself, has been handed down to us by his apostles and their successors as the central act of Christian worship. Hence, notwithstanding the division of Chirstianity into various national churches, that service has preserved its original character; and it is, to this day, materially the same both in practice and design in all the ancient churches. The difference in ritual and even in doctrinal definition cannot in any way gainsay the redemptive purpose of that sacred act. Therefore, we can truthfully say that our liturgy, as presented in this book, in spite of the many changes it has undergone in the course of centuries, and of the elaborate expansion it has assumed, is in fact the institution of the Lord's Supper, and represents at the same time the peculiarities and tradition of our church as they have come down to us from St. Gregory and his successors.

The object of the present publication is twofold. First, to put in the hands of the devout worshipper, in a compact form and in ecclesiastical language, a manual of the complete missal, which will comprise both those portions which are audibly recited and sung, as well as the silently offered prayers of the celebrant, together with all the rubrics relating to the ritual of the service. The lections from Holy Scripture, and some of the lengthy occasional prayers and homilies, as given in the lectionary, have been purposely omitted, as their inclusion would have made this volume unnecessarily cumbersome. Secondly, to supply a long-felt want, in this country, of a complete translation of our liturgy for the benefit of American readers in general, and of those members of our church who do not understand the ancient Armenian sufficiently to be able intelligently

to take part in the service of the church, as well as of many others who have already been estranged therefrom, in consequence of a lack of such understanding.

Several English versions of our Liturgy have been published in England, the earliest of which, namely, that by R. W. Blackmore, is a re-translation from the Russian translation of Hovsep Arghoutiantz, Armenian Archbishop of Russia in 1799. Blackmore's version has been reprinted from time to time with various changes and improvements by Neal, Malan, Fortesque and Astwatzadourian, and has formed the groundwork for Brightman's excellent version, which he has prepared with the help of Dr. Baronian, and published in his Eastern Liturgies at the Clarendon Press, Oxford. Miss Amy Apcar of Calcutta has published in three volumes the "Melodies of the Liturgy of the Church of Armenia," which comprise not only the harmonized melodies as sung in some parts of Persia and India, but also the entire service with prayers, psams, and hymns in Armenian and English, and the transliteration of the words of the music according to the Indo–Persion pronunciation. From this version I have borrowed the words of the **Kyrie** or **Der Voghormia,** both text and translation with Miss Apcar's kind permission.

The users of this book will owe a debt of gratitude to the family of the late Paul A. Mosesian, through whose generosity its publication was made possible. Furthermore, if this volume should in any degree prove a help to a better understanding of the divine service of our church, and thereby bring Christian souls to God, the editor's and translator's labors will have been amply rewarded.

T. I.

A FOREWORD

The purpose of a prayer book is to provide a medium through which the members of a congregation may act together in offering their common praises to Almighty God.

Early in its existence, the Christian Church, following the traditions of our Lord and His Apostles, developed a form of worship centering about the supreme act of fellowship and devotion instituted by Our Saviour and known from apostolic times as the Holy Eucharist.

This form of worship, so far as its essential features are concerned, was the same in all parts of the Church, but in language and phrasing was colored by the temperaments and emphasis of differing racial cultures. So the great liturgies of early days, uniform in purpose and general characteristics, have come down through the channel of national churches, bequeathing to their generation the rich treasures of the religious experience of the ages. Among these standard forms of worship is that preserved in the Church of Armenia.

When the liturgies were first committed to writing, they were in the tongue of the people who used them. As time went on the speech of the people changed, but, partly from the natural conservatism of the churches, partly from the affection in which the sacred words themselves were held, the older language of the service was retained, until there developed a marked difference between the language of the holy rites and the common speech of the faithful. The contrast widened after the great migrations in which so many descendants of ancient races moved to other lands and adopted the tongue of their new homes.

ՆԱԽԱԲԱՆ

Որեւէ աղօթագրքի մը նպատակն ըլլալու է՝ միջոց մը հայթայթել, որով համայնքի մը անդամները կարենան իրենց հասարակաց փառաբանութիւնները միասնաբար մատուցանել առ Ամենակալն Աստուած:

Քրիստոնէական Եկեղեցին, իր սկզբնաւորութեան միջոցին իսկ, Տեառն մերոյ եւ անոր Առաքելոց աւանդութեան հետեւելով, կազմակերպեց այն պաշտամունքը զոր մեր Փրկիչն ինքն հաստատեց եղբայրակցութեան եւ բարեպաշտութեան գերագոյն խորհուրդի վրայ, եւ որ առաքելական դարերէ ի վեր Սուրբ Պատարագ կը կոչուի:

Պաշտամունքի այս ձեւը, իր էական յատկութեանց տեսակէտով, բոլոր եկեղեցեաց մէջ նոյնն էր. բայց լեզուի ու ոճի տեսակէտով՝ տարբեր ցեղային զարգացման խառնուածքի և ազդեցութեանց ենթակայ էր: Այնպէս որ նախկին ժամանակաց պաշտամանց կարգերը, ինչքան որ և նպատակաւ ու ընդհանուր յատկանիշերով միայար միանման են, մեր ձեռքը հասած են ազգային եկեղեցեաց տուչութեամբ, աւանդելով մէն մի սերունդին՝ դարերու կրօնական փորձառութեան ճոխ գանձերը: Պաշտամունքի այս կարեւոր ձեւերէն մին է այն՝ որ պահուած է Հայկական Եկեղեցւոյ մէջ:

Ի սկզբանէ անտի սրբազան պաշտամանց գրքերը գրուած էին անձնիւր ժողովուրդի խօսած լեզուաւն: Իսկ հետզհետէ երբ ժողովրդի լեզուն փոխուեցաւ, բայց մասամբ եկեղեցեաց բնական պահպանողականութեան շնորհիւ եւ մասամբ եւս նոյնիսկ ընտելացուած նուիրական բառերի սիրոյն համար, պաշտամունքի նախկին լեզուն շարունակաբար պահուեցաւ, մինչև զգալի տարբերութիւն մը յերեւան եկաւ՝ նուիրական ծէսերու լեզուի եւ հաւատացելոց հասարակ խօսակցութեան միջեւ: Տարբերութիւնը աւելի ընդլայնացաւ այն ոտուար տեղափոխութեանց հետեւանօք որով հնադարեան ցեղերու բազմաթիւ սերունդներ օտար երկիրներ գաղթեցին եւ գաղթավայրի լեզուն որդեգրեցին:

There are reasons, which may not be enumerated here, why national churches transplanted to new climes should not abandon the devotional medium of their forefathers. And yet it is imperative that the worshippers in this land and generation should understand the meaning of the words with which priest and people approach the Altar. To meet this compelling need the following translation of the Armenian rite has been compiled. It presents in chaste and dignified English, side by side with the old language, the devotional treasures of the ancient liturgy so that the English adherent of the Armenian church may worship not only with the life but with the heart and mind.

Father Isaac, in publishing this translation of the Missal and its associated devotions has performed a work of importance and has placed under a debt of gratitude not only the authorities of the Church of Armenia, who are thus enabled to extend the influence of its great past, and the English speaking members of that communion, who will profit by this new aid to worship, but all devout students of the Catholic liturgies. It cannot fail to be of substantial value in promoting that sympathetic understanding of each other which lies at the foundation of the spiritual unity of Christian folk in the bond of peace and righteousness of life.

LOUIS CHILDS SANFORD

Bishop of the San Joaquin

Lent. 1932

Աւելորդ կը համարիմ թուել այն պատճառներն ըստ ո-
րոց՝ օտար երկիրներ փոխադրուող ազգային եկեղեցիք ի-
րենց հայրերու պաշտամունքի ձեւէն պէտք չէ որ շեղին։ Այ-
սու հանդերձ հարկ անհրաժեշտ է որ այս երկրի եւ դարու
մէջ ապրող աստուածապաշտներ կարող ըլլան հասկնալ միտ-
քըն այն բառերու որով քահանայ եւ ժողովուրդ Տաճարին կը
մօտենան։ Այս բուռն պահանջն կատարելու մտօք Հայկա-
կան ծէսի սոյն թարգմանութիւնը պատրաստուած է։ Մա-
քուր եւ վայելուչ անգլիերէնով, հին բնագիր լեզուին հետ
զուգընթաց, ներկայացուած են աստ հին աստուածպաշտու-
թեան հոգեւոր գանձերը, որպէսզի անգլիախօս զաւակն Հա-
յաստանեայց եկեղեցւոյ կարենայ աղօթել ոչ թէ միայն իր
կեանքով այլ նաեւ սրտով եւ մտօք։

Հայր Իսահակեան՝ Ս. Պատարագի եւ յարակից պաշ-
տամանց սոյն թարգմանութիւնը հրատարակելով՝ կարեւոր
գործ մը գործած է, որով իրեն երախտապարտ կացուցած է
ոչ թէ միայն Հայաստանեայց Եկեղեցւոյ ղեկավարները, ո-
րոնք այլեւս կարող պիտի ըլլան տարածելու այդ եկեղեցւոյ
վսեմ անցեալի աղդեցութիւնը, որպէս եւ անգլիախօս ան-
դամները այդ եկեղեցւոյն, որոնք պիտի օգտուին պաշտա-
մունքի այս նոր ձեռնտուութեամբը. այլ նաեւ Կաթուղիկէ ե-
կեղեցւոյ պաշտամունքն ուսումնասիրող ամէն բարեպաշտ
անհատ։

Տարակոյս չկայ որ այս գիրքը իրական արժէք մը պիտի
ունենայ նաեւ յառաջ բերելու համար այն փոխադարձ համա-
կրական հասկացողութիւնը, որ հիմնաքարն է հոգեւոր
միութեան Քրիստոնեայ ժողովուրդներու՝ խաղաղութեան
կապով եւ կենաց արդարութեամբ։

ԼՈՒԻՍ ՉԱՅԼՏՍ ՍԱՆՖԸՐՏ

Եպիսկոպոս Սան Վաֆին Թեմի

Յաւուրս Մեծի Պահոց. 1932

ՅԱՆԿ

Յառաջաբան	VII—IX
Նախաբան Գեր. Տ. Սանֆիրբրտ Եպիսկոպոսի	XV—XVIII
Յանկ եւ Յուցակ	XXI—XXX

ՄԱՍ Ա.

1. Զգեստաւորութիւն	2—8
2. Սկիզբն պաշտաման (Օրէնք Սրբոյ Պատարագի)	10
3. Շարական հանդերձի	10—12
4. Լուացումն	12—14
5. Խոստովանութիւն	16—18
6. Մուտք եւ Երկրպագութիւն	18—22
7. Նարեկեան աղօթք	22—26
8. Ընտրեալդ	26—28
9. Կանոն սպաս դնելոյ	28—32
10. Խնկարկութիւն	32—36
11. Ժամամուտ	36
12. Վերաբերումն Ս. Աւետարանի եւ Երգ երեքսրբեան	38—42
13. Քարոզ համաշխարհական	42—44
14. Ընթերցուածք ի Ս. Գրոց եւ Հանդանակ	46—48
15. Քարոզ եւ աղօթք խաղաղական	50—54
16. Արձակումն երախայից	54
17. Սրբասացութիւն եւ վերաբերումն ընծայից	54—60
18. Արձակումն անհաղորդից	60
19. Ողջոյն	60—62
20. Սրբերգութիւն եւ կանոն (Նուիրագործութեան)	68
21. Ցիշատակութիւն տնօրէնութեանց Փրկչին	68—70
22. Մատուցումն Ս. Պատարագի	70
23. Կոչումն Հոգւոյն Սրբոյ	72
24. Աղօթք միջնորդութեան	74
25. Ցիշատակութիւն սրբոց հանգուցելոց	76—78
26. Ցիշատակութիւն հաւատացելոց կենդանեաց	78
27. Ընդհանուր զոհաբանութիւն	80
28. Մասնաւոր յիշատակութիւնք	82
29. Քարոզ յիշատակութեանց	84
30. Աղօթք Տէրունական	86
31. Վերացուցումն	88
32. Խառնումն	90

CONTENTS

Preface	XII—XIV
Foreword by Rt. Rev. Bishop Sanford	XV—XVIII
Tables of Contents and Indexes	XXI—XXX

PART I

1. Order of Vesting	3—9
2. Commencement of the Liturgy	11
3. Hymn of Vesting	11—13
4. Ablution	13—15
5. Confession	17
6. Entrance and worship	19—23
7. Prayers of St. Gregory of Narek	23—27
8. Undrial	27—29
9. Anaphora, or preparation of the elements	29—33
10. Censing	33—35
11. Introit	37
12. Entrance of the Gospal, and Trisagion	39—43
13. Litany of universal intercession	42—45
14. Scripture Lessions and the Creed	47—51
15. Litany and Prayer for peace	51—55
16. Dismissal of Catechumens	55
17. Hagiology and Great Entrance	57—59
18. Dismissal of Non-Communicants	61
19. Salutation or the Kiss of peace	61—63
20. Sanctus and Canon of Consecration	65—69
21. Commemoration of the Savior's Ministry	69—71
22. The Offering of the Holy Sacrifice	71
23. Epiclesis or Invocation of the Holy Ghost	73
24. Intercessory prayer	75
25. Commemoration of the saints departed	77
26. Commemoration of the living	79
27. General Thanksgiving	81
28. Special Commemorations	83
29. Litany of Commemorations	85
30. The Lord's prayer	87
31. The Elevation	89
32. The Intinction	91

33. *Տէր ողորմեա* 92—96
34. *Մաղմոսերգութիւն* 96—97
35. *Բեկումն* 98
36. *Աղօթք Ս. Ոսկեբերանի* 100
37. *Հաղորդութիւն* 102—104
38. *Գոհաբանութիւն զկնի հաղորդութեան* 106
39. *Աղօթք ընդհանրական* 108—110
40. *Ի սկզբանէ էր Բանն* 110
41. *Պահպանիչ եւ արձակումն* 112—114
42. *Բաշխումն նշխարի* 114—116

ՄԱՍՆ Բ.

ՇԱՐԱԿԱՆՔ ԵՒ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

1. Շարականք
(1) *Թափօրի* 118—126
(2) *Ճաշու* 126—158
(3) *Ս. Հաղորդութեան* 158—160
2. Մեղեդիք 162—166
3. Ժամամուտք 168—190
4. Ալէլուիայք ճաւու 190—196
5. Սրբասացութիւնք 196—198
6. Կարգ Հանդիսաւոր Վերաբերութեան 200—202
7. Կարգ Պենտէկոստէի 204—206
8. Պաստօն Հոգեհանգստեան 208—216
9. Կարգ խաղողոյ օրհնութեան կամ գոհաբանութիւն հնձոց 218—222
10. Կարգ ջրօրհնեաց ի տօնի Աստուածայայտնութեան 224—236
11. Կարգ ընդհանուր խոստովանութեան
(1) *Մեղայ եւ Արձակումն* 238—240
(2) *Ողորմեա ինձ Աստուած* 240—244
(3) *Տէր ամենակալ* 244—250
(4) *Հաւատով խոստովանիմ* 252—263

33. Kyrie Eleison, or Lord, have mercy 93—95
34. Psalmody 97
35. Fraction 99
36. Prayer of St. Chrysostom 101—103
37. The Communion 103—105
38. Thanksgiving after Communion 107—109
39. Universal Prayer 109—111
40. In the beginning was the Word 111—113
41. Benediction and Dismissal 113—115
42. Distribution of Blessed Bread 115—117

PART II

HYMNS AND OCCASIONAL SERVICES

1. Hymns
    (1) Processional 119—126
    (2) Jashou, or mid-day hymn 127—159
    (3) Holy Communion hymn 159—161
2. Megheti or Anthems 163—167
3. Introits 169—191
4. Jashou Psalms 191—197
5. The Hagiologies 197—199
6. The Great Entrance (For special occasions) 201—203
7. Pentecostal Service 205—207
8. Requiem, or Office for the dead 209—217
9. Order of blessing the grapes or harvest thanksgiving 218—222
10. Order of blessing the water on Epiphany Day 225—237
11. General form of Confession of Sins
    (1) Confession and Absolution 239—241
    (2) Have mercy upon me, O God 241—245
    (3) The Prayer of King Manases 245—240
    (4) Prayers of St. Nerses the Graceful 253—263

ՄԱՍՆ Գ.

ԵՂԱՆԱԿԲ ԵՐԳՈՑ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ 266—335

1. Խորհուրդ Խորին (վասն հասարակ աւուրց) 266
» » (վասն հանդիսաւոր աւուրց) 268
2. Ցայս յարկ 270
3. Բարեխօսութեամբ 275
4. Այսօր Ժողովեալք 276
5. Մեղեդի Ցարութեան (Այսօր մեռեալք) 277
6. » Աստուածածնի (Աչքն ծով) 280
7. Ընտրեալ 283
8. Սուրբ Աստուած 286
9. Վասն խաղաղութեան (Տէր ողորմեա) 286
10. Փառք քեզ Տէր Աստուած մեր 287
11. Մի ոք 287
12. Մարմին (թեթեւ) 288
» (ծանր) 289
13. Սաղմոս (ծանր) 290
14. Սրբասացութիւն.—Հրեշտակային 290
15. » Ով է որպէս 293
16. » Բազմութիւնք 295
17. Քրիստոս ի մէջ 298
18. Առ քեզ Աստուած 299
19. Եւ զբստոյգ 300
20. Սուրբ սուրբ 302
21. Ամէն Հայր երկնաւոր 303
22. Ցամենայնի 304
23. Որդի Աստուծոյ 305
24. Հոգի Աստուծոյ 307
25. Առաքելոց (Ցիշեա Տէր եւ ողորմեա) 308
26. Ամէն եւ ընդ հոգւոյդ քում 310
27. Հայր մեր (առաջին եղանակ) 313
» » (երկրորդ եղանակ) 314
28. Միայն սուրբ 315
29. Ամէն Հայր սուրբ (առաջին եղանակ) 316
» » » (երկրորդ եղանակ) 318
30. Տէր ողորմեա (առաջին եղանակ) 319
» » (երկրորդ եղանակ) 321
» » (երրորդ եղանակ) 323

PART III

MELODIES OF THE HOLY EUCHARIST 266—335

1. Khorhoort Khorin (for common days) 266
" " (for festivals) 268
2. Hais Harg 270
3. Parekhosootiamp 275
4. Aisor zhoghovial 276
5. Megheti (ai-sor merhialk) 277
6. Megehti of the Blessed Virgin (achkun dsov) 280
7 Undrial 283
8. Soorp Asdvadz 286
9. Vasen khaghaghootian (Der voghormia) 286
10. Parhk kez der Asdvadz mer 287
11. Mi vok 287
12. Marmin (first tune) 288
" (second tune) 289
13. Saghmos 290
14. Hagiology:—Hureshdagayin 290
15. " Ov e vorbes 293
16. " Pazmootiunk 295
17. Chrisdos i mech 298
18. Arh kez Asdvadz 299
19. Yev zusduyk 300
20. Soorp, soorp 302
21. Amen Hair yergnavor 303
22. Hamenai-ni 304
23. Vorti Asdoodzo 305
24. Hoki Asdoodzo 307
25. Arakelotz (Hi-shia der-yev-voghormia) 308
26. Amen yev unt hokuyt koom 310
27. Hair mer (first tune) 313
" " (second tune) 314
28. Miain soorp 315
29. Amen Hair soorp (first tune) 316
" " " (second tune) 318
30. Der voghormia (first tune) 319
" " (second tune) 321
" " (third tune) 323

31. *Օրհնեալ է Աստուած* 324
32. *Աստուած մեր* 326
33. *Լցաք* 326
34. *Գոհանամք* 327
35. *Ամէն եղիցի* 328
36. *Զանճառելի* (Ճրագալուցի Ս. Ծննդեան) 330
37. *Սուրբ զԱստուածածինն* (Ս. Ծննդեան աւուր) 331
38. *Գովեա* (Ս. Զատկի) 333
39. *Օրհնութիւն երից մանկանց* 334

31. Ornial e Asdvadz 324
32. Asdvadz mer 326
33. Lutzak 326
34. Kohanamk 327
35. Amen yeghitzi 328
36. Zanjarheli (**for Christmas Eve**) 330
37. Soorp Zasdvadzadzin (**Christmas Day**) 331
38. Kovia (**Easter**) 333
39. Ornootiun yeritz mangantz 334

ՑՈՒՑԱԿ ՇԱՐԱԿԱՆԱՑ

Այսօր երկնայինքն (38) 148
Այսօր ժողովեալ (8) 124
Այսօր խընդրի պատուական (46) 156
Այսօր կանգնեցաւ (21) 136
Այսօր հրեշտակք (6) 122
Այսօր ձայնն հայրական 232
Այսօր յարեաւ ի մեռելոց (5) 120
Անսկիզբն Աստուած 210
Անսկիզբն Բանն Հօր (20) 134
Անթառամ ծաղիկ (42) 152
Առաքելոյ աղաւնւոյ (40) 150
Աստուած անեղ 212
Արարիչ եւ մարդասէր 214
Արեգակն արդարութեան (47) 156
Բանն որ ընդ Հօր (20) 128
Դթա Տէր ի հոգիս 208
Զանճառելի լուսոյ մայր (12) 128
Զդալուստ քո Քրիստոս (34) 146
Զթագաւորն փառաց (23) 136
Զթագաւորն Քրիստոս (27) 140
Էջ Միածինն ի Հօրէ (43) 154
Ընտրեալդ յԱստուծոյ 26
Թագաւորեաց Աստուած ի վերայ (24) 138
Թագաւոր դոլով քո յաշխարհ (4) 120
Թագաւորին յաւիտենից (25) 138
Թագաւոր Քրիստոս էակից (29) 142
Իշխանութիւնք երկնից (33) 144
Լոյս ի լուսոյ 224
Լուսով աստուածութեան քո (28) 140
Խաչի քո Քրիստոս 219
Խորհուրդ մեծ (3) 120
Խորհուրդ խորին 10
Կենդանարար Աստուած (36) 146
Հրաշակերտ եւ զօրեղ (11) 126
Հրաշափառ Աստուած (1) 118
Ցաղթող եւ զնոր օրհնութիւն (44) 154
Ցայս յարկ նուիրանաց 34
Ցարեաւ Քրիստոս ի մեռելոց (22) 136

Որ անբաւելի (30) 142
Որ արարեր զօրութեամբ (17) 132
Որ ըզխորհուրդ քո զալստեան (19) 134
Որ ի վերայ բըղխեալ (39) 150
Որ ի հարաչարժ (35) 146
Որ համբարձաւն (31) 142
Որ ողորմութեամբ քո (32) 144
Որ պատուիրան ճշմարտութեան (18) 132
Ով զարմանալի 232
Ուրախացիր պսակ կուսից (41) 152
Ուրախ լեր (2) 118
Սարսափելի հողմոյ նման (37) 148
Սուրբ զԱստուածածինն (13) 128
Վերաձգողն երկնից (49) 158
Ցընծա այսօր փառօք (7) 122
Փառաբանութիւն առաքեմք (48) 158
Քեզ Քրիստոսի կաթուղիկէ (45) 154
Օրհնեմք զքեզ անըսկիզբն (16) 130
Օրհնութիւն ի բարձունս (26) 140

Նա զմեղս մեր բառնայ և վասն մեր չարչարի.
եւ նորա վիրօքն բժշկեցաք։—Ես. ԾԳ. 4,5։

ՄԱՍ Ա.

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

Ըստ հասարակ աւուրց

PART I

CELEBRATION OF THE HOLY EUCHARIST

In Ordinary

ԿԱՆՈՆ ԶԳԵՍՏԱՒՈՐԵԼՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՉ ՔԱՀԱՆԱՅԻ

Մտցէ քահանայն յաւանդատունն հանդերձ սարկաւագօք եւ դպրօք, եւ նախ զգեցեալ սարկաւագացն եւ այլ պաշտօնէից, ասասցեն զայս Սղոմոս (ՃԼԱ) տուն առ տուն։

(Սրկ.) *Ալէլուիա, ալէլուիա։*

(Քահ.) *Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն։*

(Սրկ).—1. *Ցիշեա Տէր զԴաւիթ եւ զամենայն հեզութիւն նորա։*

2. *Որպէս երդուաւ Տեառն, եւ ուխտս եղ Աստուծոյ Յակոբայ։*

3. *Թէ ոչ մտից ի յարկս տանս իմոյ, եւ թէ ելից յանկողինս մահճաց իմոց։*

4. *Թէ տաց քուն աչաց իմոց կամ նինջ արտեւանաց իմոց կամ հանգիստ իրանաց իմոց, մինչև գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ։*

5. *Ահա լուաք զնմանէ յԵփրաթայ, եւ գտաք զնա ի դաշտս մայրեաց։*

6. *Մտցուք ի յարկս նորա, երկիրպագցուք ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա։*

7. *Արի՛ Տէր ի հանգիստ քո, դու եւ տապանակ կտակի սրբութեան քո։*

8. *Երիցունք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն։*

9. *Վասն Դաւթի սիրելւոյ քո՝ մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ։*

10. *Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա, ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա։*

ORDER OF VESTING OF THE CELEBRANT PRIEST

The Priest enters the vestry together with the deacons and clerks, and these latter having first put on their appropriate vestments, Psalm CXXXII will be recited thus in antiphon.

(*Deacon*:) Alleluia, alleluia.

(*Priest*:) Let thy priests be clothed with righteousness; and let thy saints shout for joy.

(*Deacon*:) 1. Lord, remember David, and all his humility.

2. How he sware unto the Lord, and vowed unto the mighty God of Jacob.

3. Surely I will not come into the tabernacle of my house, nor go up into my bed:

4. I will not give sleep to mine eyes, or slumber to mine eyelids, until I find out a place for the Lord, an habitation for the mighty God of Jacob.

5. Lo, we heard of it at Ephratah: we found it in the fields of the wood.

6. We will go into his tabernacles: we will worship at his footstool.

7. Arise, O Lord, into thy rest; thou, and the ark of thy strength.

8. Let thy priests be clothed with righteousness; and let thy saints shout for joy.

9. For thy servant David's sake turn not away the face of thine anointed.

10. The Lord hath sworn in truth unto David; he will not turn from it; of the fruit of thy body will I set upon thy throne.

11. Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ, եւ զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա,

12. Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո:

13. Հաճեցաւ Տէր ընդ Սիոն եւ ընտրեաց բնակիլ ի նմա, ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, ի սմա բնակեցայց զի հաճեցայ ընդ սա:

14. Զայրիս սորա օրհնելով օրհնեցից, եւ զաղքատս սորա լցուցից հացիւ:

15. Երիցանց սորա զգեցուցից զփրկութիւն, եւ սուրբք սորա ցնծալով ցնծասցեն։

16. Անդ ծագեցից զեղջիւր ի Դաւիթ, պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ:

17. Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, եւ ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

(Սրկ.)—Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ի Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցուսցէ եւ ողորմեսցի։

Քահանայն ասասցէ երկոտասան Տէր ողորմեայս, եւ զաղօթս զայս ի ծածուկ.

Որ զգեցեալ ես զլոյս որպէս հանդերձ, Տէր մեր Յիսուս Քրիստոս, անճառելի խոնարհութեամբ յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան շրջեցար. որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի եւ զարդարեցեր զեկեղեցի քո սուրբ: Տէր ամենակալ, որ պարգեւեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ, արժանի արա՛ և զիս ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո, որ հաւարձակիմ եւ մերձենամ ի նոյն հոգեւոր պաշտօն փառաց քոց. որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց, որ է հանդերձ պղծութեան, և զարդարեցայց լուսով քով: Ընկեա՛ յինէն զչարիս իմ և թօ-

11. If thy children will keep my covenant and my testimony that I shall teach them,

12. Their children shall also sit upon thy throne for evermore.

13. For the Lord hath chosen Zion; he hath desired it for his habitation, saying, "This is my rest forever: here will I dwell; for I have desired it."

14. I will abundantly bless her widows: I will satisfy her poor with bread.

15. I will also clothe her priests with salvation: and her saints shall shout aloud for joy.

16. There will I make the horn of David to bud: I have ordained a lamp for mine anointed.

17. His enemies will I clothe with shame: but upon himself shall my holiness flourish.

Glory be to the Father, and to the Son, and to the Holy Ghost; Now, and ever, and unto unending times. Amen.

(*Deacon*:) And again in peace we pray to the Lord. Let us unanimously beseech the Lord in faith, that he bestow on us the grace of his mercy. May the almighty Lord our God save us and have mercy upon us.

(*The Priest shall now say twelve times* "Lord have mercy," *and shall then offer in silence the following prayer*:)

Jesus Christ our Lord, who art clothed with light as with a garment, who in unspeakable humility didst appear on earth and walk among men, who didst become eternal highpriest according to the order of Melchisedec and didst adorn thy holy church. Lord almighty, who hast granted us to put on that same heavenly garment, make me, thine unprofitable servant, worthy at this hour, as I venture to approach that same spiritual ministry of thy glory, to put off all mine ungodliness, which is a garment of defilement, and be adorned with thy light. Remove my wickedness from me, and shake off my trans-

թափեա զյանցանս իմ, որպէս զի արժանի եղէց հանդերձեալ լուսոյդ առ ի քէն։ Շնորհեա՛ ինձ քահանայական փառօք մտանել ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ՝ որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո. զի եւ ես պատրաստ գտայց երկնաւոր սուգաստիդ ընդ իմաստուն կուսանսն փառաւորել զքեզ Քրիստոս որ բարձեր զմեղս ամենեցուն. զի դու ես սրբութիւն անձանց մերոց, եւ քեզ բարերարիդ Աստուծոյ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ մատուցեալ կիսասարկաւագացն զգեցուսցեն զհանդերձսն ասելով վասն իւրաքանչիւրոցն. *Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։* Քահանայն խաչակնքելով ի վերայ իւրաքանչիւրոցն՝ ասասցէ. *Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Նախ դիցէ Քահանայն գեղջրն ի գլուխ իւր ասելով.

Դի՛ր, Տէր, սաղաւարտ փրկութեան ի գլուխ իմ՝ զնչան խաչի քո պատերազմել ընդ գօրութիւնս թշնամւոյն, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Շապկին

Զգեցո՛, Տէր, ինձ հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան, եւ շուրջ պատեա՛ զզգեստովս փրկութեան. շնորհօք Տեառն մերոյ եւայլն։

Փորուրարին

Զգեցո՛, Տէր, պարանոցի իմոյ զարդարութիւն, եւ սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց. շնորհօք Տեառն մերոյ եւայլն։

Թաշկինակին

Սրբեա՛ Տէր զձեռս իմ յամենայն աղտեղութենէ մեղաց. շնորհօք Տեառն մերոյ եւայլն։

gressions, that I may become worthy of thy light which is near at hand. Grant me with priestly dignity to enter the ministry of thy holy things in company with those who have blamelessly kept thy commandments, so that I also be found prepared for the heavenly marriage-feast with the wise virgins, to glorify thee, O Christ, who didst bear the sins of all men. For thou alone art our holiness and unto thee, our beneficent God, are due glory, dominion, and honor, now and ever, and unto unending times. Amen.

> (*The subdeacons, drawing near, shall present the vestments one by one, saying each time* "And again in peace we pray to the Lord." *The Priest shall make the sign of the cross over each vestment and shall say in response,* "Blessing and glory to the Father and to the Son and to the Holy Ghost, now and ever, and unto unending times." Amen. *And first he puts the coronet upon his head saying,*

Place, O Lord, upon my head the helmet of salvation for a sign of thy cross to fight against the powers of the enemy; by the grace of our Lord Jesus Christ, unto whom are due glory, dominion, and honor, now and ever, and unto unending times. Amen.

For the Alb (*Shapik*)

Clothe me, O Lord, in garments of redemption and in vesture of joyfulness, and encompass me with this robe of salvation; by the grace of our Lord Jesus Christ, unto whom are due, etc.

For the Stole (*Porourar*)

Cover my neck, O Lord, with righteousness, and cleanse my heart from all defilement of sin: by the grace of our Lord Jesus Christ, unto whom are due, etc.

For the Towel (*Tashkinak*)

Cleanse my hands, O Lord, from all defilement of sin: by the grace of our Lord Jesus Christ, unto whom are due, etc.

Գոտուոյն

Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ եւ զմտացս, եւ չիջուսցէ ի սոցանէ զխորհուրդս աղտեղիս. եւ զօրութիւն շնորհաց քոց յամենայն ժամ բնակեսցէ ի սոսա. շնորհօք Տեառն մերոյ եւայլն:

Բազպանին (յաջ ձեռն)

Տուր Տէր զօրութիւն աջոյ ձեռին իմոյ, եւ լուա՛ զամենայն աղտեղութիւնս իմ, որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ եւ մարմնոյ. շնորհօք Տեառն մերոյ եւայլն:

Բազպանին (յահեակ ձեռն)

Տուր Տէր զօրութիւն ձախոյ ձեռին իմոյ, եւ լուա՛ զամենայն աղտեղութիւնս իմ, որպէսզի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ եւ մարմնոյ. շնորհօք Տեառն մերոյ եւայլն:

Վակասին (Վարշամակին)

Դիր Տէր վարշամակ փրկութեան պարանոցի իմոյ եւ մաքրեա զիս աստուածային զօրութեամբդ. շնորհօք Տեառն մերոյ եւայլն:

Շուրջառին (Նափորտին)

Տէր ողորմութեամբ քով զգեցո՛ ինձ զգեստ պայծառ, եւ պարսպեա՛ ընդ դէմ ներգործութեան չարին, զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ. շնորհօք Տեառն մերոյ եւայլն:

Եւ ապա ասասցէ

Ցնծասցէ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան. իբրեւ փեսայի եդ ինձ պսակ, եւ որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

For the Girdle (Goti)

Let the girdle of faith encircle my heart and mind, and extinguish in them thoughts of impurity; and let the power of thy grace dwell in them at all times: by the grace of our Lord Jesus Christ, unto whom are due, etc.

For the Right Hand Maniple (Bazpan)

Grant, O Lord, strength to my right hand, and wash away all my impurities, that I may be enabled to serve thee in cleanness of mind and body: by the grace of our Lord Jesus Christ, unto whom are due, etc.

For the Left Hand Maniple (Bazpan)

Grant, O Lord, strength to my left hand, and wash away all my impurities, that I may be enabled to serve thee in cleanness of mind and body: by the grace of our Lord Jesus Christ, unto whom are due, etc.

For the Ephod (Vakas) or Varshamak (Napkin)

Cover my neck, O Lord, with the napkin of righteousness, and cleanse me with thy divine power: by the grace of our Lord Jesus Christ, unto whom are, etc.

For the Chasuble or Cope (Shourdchar)

Lord, of thy mercy, clothe me with radiant garment, and protect me against the influence of the evil one, that I may be fit to magnify thy glorious name: by the grace of our Lord Jesus Christ, unto whom are due, etc.

Then he shall say:

My soul shall rejoice in the Lord, for he hath clothed me with a garment of righteousness and with a raiment of gladness: he hath put upon me a crown as upon a bridegroom, and hath adorned me like a bride with her jewels: by the grace of our Lord Jesus Christ, unto whom are due glory, dominion, and honor, now and ever, and unto unending times. Amen.

ՕՐԷՆՔ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

Մինչ քահանայն զգեցեալ հանդերձսն յաւանդատան անդ՝ խորհուրդ Ս. Պատարագի սկսանի ի փոքր ատենի եկեղեցւոյն այսպէս.

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Զսաղմոսերգութիւնս եւ զաղաչանս ընկալցի մարդասէրն Աստուած ի հաճոյս բարերար կամաց իւրոց, մեր մեղաց եւ բազում յանցանացն թողութիւն շնորհեսցէ, ի չարեաց փրկեսցէ, ի մեղաց պահեսցէ, ննջեցելոց մերոց հանգիստ եւ արքայութիւն պարգեւեսցէ, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Շարական հանդերձի յորժամ զգեցուս Քահանայն

Խորհուրդ խորին անհաս անսկիզբն որ զարդարեցեր զվերին պետութիւնդ՝ ի յառագաստ անմատոյց լուսոյն, գերապանծ փառօք զդասս հրեղինաց:

Անճառահրաշ զօրութեամբ ստեղծեր զԱդամ

ORDER OF THE HOLY EUCHARIST

While the Celebrant is vesting in the vestry, the service proper will commence in the chancel on this wise.

Blessed be our Lord Jesus Christ. Amen.

Our Father which art in heaven, hallowed be thy name. Thy kingdom come, thy will be done in earth as it is in heaven. Give us this day our daily bread. And forgive us our trespasses, as we forgive them that trespass against us. And lead us not into temptation, but deliver us from evil. For thine is the kingdom, the power, and the glory, forever. Amen.

May God the lover of man accept our psalms and supplications as a pleasing offering to his benevolent will, granting us forgiveness of our sins and of our many misdeeds, delivering us from evil influences, shielding us from wrong-doing, and bestowing on our departed brethren rest and heavenly kingdom. And to him be ascribed glory forever. Amen.

Hymn sung during the vesting of the priest.

O mystery, deep, inscrutable, without beginning, who hast adorned thy supernal realm in the abode of the inaccessible light, and, with consummate splendor, the choirs of angels.

With inexpressible power didst thou create Adam in

պատկեր տիրական, եւ նազելի փառօք զգեստաւորեցեր, ի դրախտն Ադենի տեղի բերկրանաց:

Զարշարանօք քո սուրբ Միածնիդ՝ նորոգեցան արարածք ամենայն. եւ վերստին մարդն անմահացաւ, զարդարեալ ի զգեստ անկողոպտելի:

Անձրեւածին բաժակ հրահոսան, որ հեղար յառաքեալսն ի սուրբ վերնատանն. հե՛ղ եւ ի մեզ, Հոգիդ Սուրբ Աստուած, ընդ պատմուճանին զքո զիմաստութիւն:

Տան քում վայելէ սրբութիւն, որ զգեցար զվայելչութիւն՝ սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ. պատեա՛ զմէջս մեր ճշմարտութեամբ:

Որ զարարչագործ բազուկս քո տարածեցեր ընդդէմ աստեղաց, հաստատեա՛ զբազուկս մեր կարողութեամբ համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդել:

Իւիւմամբ թագ ի գլուխ՝ պատեսցես զմիտս, եւ զդայարանս, խաչանիշ ուրարամբ ըստ Ահարովնի, ծաղկեալ յոսկեթել՝ ի զարդ խորանին:

Բամից բոլորից տիրապէս աստուածպետական, նափորտապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր, քում սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր:

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա՛, եւ զերկրպագուս անուանդ քում պահեա՛ ի խաղաղութեան:

Ժողովուրդն կանգնի:

Յորժամ դպիրքն երգեն զՅորհուրդ Խորին, Քահանայն հանդերձ սարկաւագօք եկեսցէ առաջի բեմին եւ լուսացէ ըզձեռս ասելով ի ծածուկ Սաղմոս Իե.:

(Քահ. կցորդ)—Լուսացից սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ եղէց զսեղանով քով Տէր:

(Սրկ. փոխ.)—1. Դատ արա՛ ինձ Տէր, զի ես յանբծութեան իմում գնացի. ի Տէր յուսացայ եւ զի մի՛ եղէց հիւանդ:

thine own image, and with sumptuous glory thou didst clothe him in the garden of Eden, which was the home of delights.

Through the sufferings of thy holy only-begotten, all creation was revived and man was again made immortal, and was clad in garments inviolate.

Fire-showering generous chalice, that didst flow upon the apostles in the upper-chamber, shed thou upon us also, O Holy Spirit of God, in union with this vestment, thy divine wisdom.

Holiness becometh thine house; thou hast clothed thyself with majesty, and hast girded thy loins with the glory of holiness; gird thou our loins with truth.

O Lord, who didst stretch forth thy creating arms towards the stars, strengthen thou our arms to intercede with thee, as we lift up our hands in prayer.

Encompass thou our minds with the encircling crown upon the head, and our senses, with the cross-emblazoned stole, like the gold-embroidered vesture of Aaron, in adornment of thy sanctuary.

Divine sovereign of all peoples, thou hast vested us with thy love, as now with the chasuble, in order to minister worthily thine holy mysteries.

Heavenly King, keep thy church immovable, and keep the worshippers of thy holy name in peace.

Congregation to stand.

(*While the choir is singing the* Khorhourt Khorin, *the Priest being vested, together with his deacons, steps in front of the sanctuary and washes his hands, reciting silently in antiphon with the deacon Psalm XXVI*):

(*Priest*:) I will wash my hands in innocency; and so will I compass thine altar, O Lord.

(*Deacon*:) 1. Be thou my judge, O Lord, for I have walked in mine integrity. I have trusted also in the Lord; therefore I shall not ail.

2. Փորձեա՛ զիս Տէր եւ քննեա՛ զիս. փորձեա՛ զերիկամունս իմ եւ զսիրտ իմ։

3. Ողորմութիւն քո Տէր առաջի աչաց իմոց. եւ հաճոյ եղէց ճշմարտութեան քում։

4. Ոչ նստայց ես յաթոռս նանրաց. եւ ընդ անօրէնս ես ոչ մտից։

5. Ատեցի ես զժողովս չարաց, եւ ընդ ամբարիշտս ես ոչ նստայց։

6. Լուացիցս սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ եղէց զսեղանով քով Տէր։

7. Լսել ինձ զձայն օրհնութեան քո, եւ պատմել զամենայն սքանչելիս քո։

8. Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, եւ զտեղի յարկի փառաց քոց։

9. Մի՛ կորուսաներ ընդ ամբարիշտս զանձն իմ, եւ մի՛ ընդ արս արիւնահեղս զկեանս իմ։

10. Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են. և աջ նոցա լի է կաշառօք։

11. Ես յամբծութեան իմում գնացի, փրկեա՛ զիս Տէր և ողորմեա՛ ինձ։

12. Ոտն իմ կացցէ յուղղութեան։

13. Ցեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

[Ի հանդիսաւոր աւուրս յորժամ եպիսկոպոս իցէ պատարագողն, զկնի զգեստաւորելոյ՝ *Խորհուրդ Խորին* ընդհատի եւ *Հրաշափառ* (էջ 118) երգի՝ մինչ պատարագիչն հանդերձ սարկաւագօք ելեալ յառաջանայ ի մեծ ատեանն, ուրանօր ի դադարել երգոց՝ լուանայ զձեռս սաղմոսելով բարձրաձայն (*Լուացիցս սրբութեամբ*) կցորդ ընդ նախասարկաւագին որպէս ի վերոյ. եւ յաւարտելն դպիրք երգեն *Թագաւոր երկնաւոր*, եւայլն ըստ կարգին։]

(Քահ.)—*Վասն սրբուհւոյ Աստուածածնի բա-*

2. Examine me, O Lord, and prove me; try my reins and my heart.

3. For thy loving kindness is before mine eyes; and I have walked in thy truth.

4. I have not sat with vain persons, neither will I go in with dissemblers.

5. I have hated the congregation of evil doers; and will not sit with the wicked.

6. I will wash my hands in innocency; so will I compass thine altar, O Lord.

7. That I may hear the voice of thy blessing, and tell of all thy wondrous works.

8. Lord, I have loved the comeliness of thy house, and the place where thine honor dwelleth.

9. Gather not my soul with sinners, nor my life with bloody men.

10. In whose hands is mischief, and their right hand is full of bribes.

11. But as for me, I have walked in mine integrity: redeem me, and be merciful unto me.

12. My foot standeth in an even place:

13. In the congregations will I bless the Lord.

Glory be to the Father, and to the Son, and to the Holy Ghost. Now, and ever, and unto unending times. Amen.

On this day the holy virgin was seen uplifted in the air and, in an ethereal chariot, ascending into heaven and entering the celestial mansions with the wise virgins who chanted in unison: Blessed art thou, O most blessed among women.

On this day, accompanied by many-eyed cherubim and by six-winged seraphim, thou didst behold the various thrones prepared for thee, O holy lady; therefore, we also sing and say: Blessed art thou, O most blessed among women.

Hymn 9—*Holy Cross 1 (Fourth Tone)*

Lo, the power of thy holy cross, O Christ, which thou hast set up, for the salvation of the world; may this holy sign preserve us from all temptation.

For thou wast lifted up thereon, O God, and on it thou didst shed thy precious blood; may this holy sign preserve us from all temptation.

Եւ ըզքո միւսանգամ ըղդալուստըդ նըշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի. սա պահեսցէ ըզմեզ յամենայն փորձութենէ։

Շրկն. 10.—Խաչի Բ.

ԱՂ.—Որ զանարատ բազուկըս քո ի խաչին տարածեցեր Քրիստոս Աստուած, եւ նըշան յաղթութեան ետուր մեզ. սովաւ ըզկեանըս մեր պահեա՛։

Որ զաշխարհակեցոյց բազկատարածութիւն խաչի քո Քրիստոս Աստուած՝ գաւազան զօրութեան ետուր մեզ. սովաւ ըզկեանըս մեր պահեա։

Որ ըզմեռեալն ի ճաշակմանէ փայտին յանցանաց՝ կենաց փայտիւըն կենագործեցեր. սովաւ ըզկեանըս մեր պահեա՛։

Շրկն. 11.—Գիւտ Խաչի

ԱՂ.—Հրաշակերտ եւ զօրեղ փայտ խաչի քոյ, Քրիստոս. գաւազան զօրութեան ի յերկրի երևեալ. եկայք ժողովուրդք երկրրպագեսցուք։

Զոր Հրէիցն ծածկեալ զանթագչելի ըզգանձըն, փափագմամբ թագուհւոյն փայտ կենաց յայտնեցաւ. եկայք ժողովուրդք երկրրպագեսցուք։

Սա է զէն յաղթութեան հաւատացելոց, ախոյեան եւ կնիք յաղթող ընդդէմ թշնամւոյն. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք։

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆՔ

Շրկն. 12.—Ճրագալուցի Ս. Ծնընդեան

Մեծացուսցէ անձն իմ ըզՏէր եւ ցընծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով.

And thy second coming hast thou presaged to the world by the sign of thy cross; may this holy sign preserve us from all temptation.

Hymn 10—*Holy Cross 2 (First Tone)*

By the stretching out of thine immaculate arms upon the cross, O Christ our God, thou didst give unto us a sign of victory; preserve our lives thereby.

By the world-redeeming extension of thine arms upon the cross, O Christ our God, thou didst give unto us a staff of power; preserve our lives thereby.

By means of that life-giving wood, thou didst bring to life him who had erstwhile died through the mortal taste of the wood; preserve our lives thereby.

Hymn 11—*Finding of the Holy Cross (First Tone)*

The marvellous and powerful wood of thy cross, O Christ, was revealed on earth as a staff of power; come, O ye people, let us adore.

The inconcealable treasure, which the Jews had hidden, was, at the queen's desire, disclosed as the life-giving wood; come, O ye people, let us adore.

It is an armour of victory for the faithful, a surety and irrefutable pledge against the enemy; come, O ye people, let us adore.

JASHOU (MEDIAL)

Hymn 12—*Christmas Eve (Third Tone)*

My soul doth magnify the Lord: and my spirit hath rejoiced in God my Saviour.

ԳՁ.—Զանճառելի լուսոյ մայր. եւ ըզբնակարան անըսկըզբնակից Որդւոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք։

Զանհաս տնօրէնութեան մայր. եւ զանձնաւոր տաճար Աստուծոյ Բանին. օրհնութեամբ մեծացուցանեմք։

Զբոլորից փրկութեան մայր. որ զանտանելին յէից ի յարգանդի եբարձ. ըզնա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք։

Շրկն. 13.—Ս. Ծնունդեան Աւուր.

ԳՁ.—Մեծացուսցէ անձն իմ ըզՏէր եւ ցընծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով.

Սուրբ զԱստուածածինն օրհնութեամբ մեծացուցանեմք։

Աւետաւոր հրեշտակն աւետարանէր ըզծընեալ Փրկիչն ի սրբոյ Կուսէն։

Ասէ ուրախ լեր բերկրեալդ. քանզի Տէր տերանց է ընդ քեզ։

Շրկն. 14.—Ա. Կիրակեի Աղուհացից

ԴԿ.—Տէր թագաւորեաց վայելչութիւն ըզգեցաւ.—Բանն որ ընդ Հօր յէութեան եւ համագոյ Սուրբ Հոգւոյն. ըզպատկերն իւրական խառնեալ ընդ հողանիւթ բընութեանս. զոր զարդարեալ փառօք եդ ի դրախտին փափկութեան։

Յորում ցընծայր զուարճացեալ անտխրական խնդութեամբ. քանզի զԱստուած տեսանէր միշտ խոնարհեալ ի դրախտին. յորմէ զլուսոյն ճառագայթ տրպաւորէր ի յինքեան։

Վասն որոյ աղաչեա՛, մայր Աստուծոյ Մարիամ, զմիածին քո զՈրդին զի չնորհեսցէ 'ստ աւազակին, ժառանգել վերըստին մեզ ըզդրախտին վայելչութիւն։

The mother of the ineffable light and bearer of the co-eternal Son we bless and magnify.

The mother of unfathomable Providence and the human temple of the Word of God we bless and magnify.

The mother of the salvation of all mankind, who bore in her womb him whom the universe is not capable of containing; let us all bless and magnify her.

Hymn 13—*Christmas Day (Third Tone)*

My soul doth magnify the Lord.

The holy mother of God we bless and magnify.

The angelic harbinger announced as Saviour him who was born of the holy virgin.

He saith: Rejoice and be glad, because the Lord of lords is with thee.

Hymn 14—*First Sunday in Lent (Fourth Mode)*

The Lord is king, and hath put on glorious apparel.

The Word, being of the Father's substance, and co-existent with the Holy Ghost, united his image with our earth-born nature, which he gloriously adorned and placed in the garden of tenderness.

In which he (Adam) exulted and was happy in the enjoyment of unmixed delights, because he saw God perpetually in that garden below, from whom the rays of heavenly light were imprinted in his soul.

Therefore, pray for us, Mary, mother of God, to thine only-begotten Son that he may grant unto us, as unto the malefactor, that we also may again inherit the delights of paradise.

Շրկն. 15.—Բ. Կիրակէի Աղուհացից

ԴՁ.—Տէր թագաւորեաց վայելչութիւն ըզգեցաւ.—Որ զօրէնքս սրբութեան պահոց նախ ի դըրախտին աւանդեցեր, զոր ոչ պահելով նախաստեղծիցըն ճաշակմամբ պըտղոյն ճաշակեցին ըզդառնութիւն մեղաց եւ մահու. վասն որոյ չնորհեա մեզ Տէր ճաշակել ըզքաղցրութիւն քոց պատուիրանաց:

Որ զանազան վիրօք մեղաց հարաք յոգիս ի թըշնամւոյն, եւ ի բազմապատիկ հիւանդութիւնս կարօտացաք մարդասիրիդ բառնալոյ ըզցաւըս մեր. վասն որոյ բըժըշկեա ըզմեզ Քրիստոս որպէս մարդասէր:

Որ եկիր ի փըրկութիւն մարդկան ծննդեամբ կուսին Մարիամու. եւ կենդանարար քո յարութեամբդ հրաւիրեցեր ըզմահացեալքս ի յարութիւն անմահութեան. վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո զմեզ Փըրկիչ:

Շրկն. 16.—Գ. Կիրակէի Աղուհացից

ԳԿ.—Տէր թագաւորեաց.— Օրհնեմք ըզքեզ անբսկիզբըն Հայր Որդւոյդ միածնի, զոր առաքեցեր ի դարձումըն մոլորեալ ոչխարին. դարձո՛ եւ զմեզ ի մեղաց Որդւոյ քո չարչարանօք:

Գովեմք ըզքեզ Բան եւ լոյս որ զտիրական քո պատկեր լուսով ճրագի քո գըտեալ վերականգնեցեր. կանգնեա զանկեալքըս մեղօք քոյին սուրբ չարչարանօք:

Բարեբանեմք զփառակիցըդ Հօր զՀոգիդ ճըշմարիտ. որ նորոգեցեր ըզհնացեալքս մեղօք հընոյն Աղամայ. նորոգեա եւ զմեզ ի մեղաց նորոգութեամբ քո չնորհաց:

Ուրախացիր բարձրելոյն հովանացեալ զօրութեամբ եւ բնակարան Սուրբ Հոգւոյն որով ծընար

Hymn 15—*Second Sunday in Lent (Fourth Tone)*

The Lord is king, and hath put on glorious apparel.

In as much as thou didst at first in paradise ordain the law of holy fasting, which our first parents having disregarded, and having tasted of the forbidden fruit, they did taste in consequence the bitterness of sin and death; therefore grant unto us, O Lord, that we may taste the sweetness of thy commandments.

In as much as by sundry wounds our souls have been injured by the enemy, and in diverse diseases we are sorely in need of thee, O lover of man, to allay our pains; therefore, heal us, O Christ our Saviour.

In as much as thou didst come to save mankind by being born of the Virgin Mary, and by thy life-giving resurrection thou didst invite us, who were dead, to the resurrection of immortality; therefore, through the intercession of thy mother preserve us, O Saviour.

Hymn 16—*Third Sunday in Lent (Third Mode)*

The Lord is king, and hath put on glorious apparel.

We bless thee, O eternal Father of thy only-begotten Son. whom thou didst send to bring back the sheep that had gone astray; do thou bring us also back from our sins, through the sufferings of thy Son.

We praise thee, O Word and Light, who didst find and restore thy divine image by the power of thy light; raise us, who are fallen in sin, through thy sufferings.

We magnify thee, O Spirit of truth, so-equal in glory with the Father, who didst regenerate us who were wasted through the sin of the old Adam, revive us now also from sin by thy renewing grace.

Rejoice through the overshadowing power of the Highest, being as thou art the recipient of the Holy Ghost, by

զԲանն Աստուած. բարեխօսեա վասըն մեր Աստուածածին Մարիամ։

Շրկն. 17.—Դ. Կիրակէի Աղուհացից

ԳՁ.—Տէր թագաւորեաց.—Որ արարեր զօրութեամբ զիմանալեացն աշխարհ վերին, եւ ի նմա հաստատեցեր տընտես ըզպետրս հրեղինացն. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ։

Որ տիրապէս մեծատունդ ստեղծեր երկրորդ աշխարհ զգալի. եւ ի դրախտն որ յաղէնի տընտես եղեալ զմարդն առաջին. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ։

Որ չինեցեր բարձրագոյն զեկեղեցի քո խորհրդեամբ, եւ ի սմա կարդեալ տընտես զքարոզս Բանին ճըշմարտութեան. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ։

Անտանելւոյն տաղաւար բարձող էիցըս բարձողին, որ ծընար զԱստուած մարմնով զանմարմնաբար ծընունդըն Հօր. բարեխօսեա վասըն մեր Աստուածածին Մարիամ։

Շրկն. 18.—Ե. Կիրակէի Աղուհացից

ԲԿ.—Տէր թագաւորեաց.— Որ պատուիրան ճըշմարտութեան աւանդեցեր եկեղեցւոյ քո Քրիստոս, անսահման ժամանակաւ աղօթել միշտ առ Աստուած հոգւով եւ մըտօք։

Որ ըզբան քո օրինաց հաստատեցեր գործով մեզ օրինակ՝ հանելով զգիշերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ բնութեամբ մերով տնօրինաբար, որում կրկնի ծունր ամենայն։

Վասն որոյ եւ մեք պաղատեսցուք առ քեզ Քրիստոս, շնորհեա մեզ յամենայն ժամ լինել քեզ յանդիման մաքուր աղօթիւք ըստ անմարմնոցն որ յերկինս։

whom thou didst bear the Word of God; intercede for us, O Mary, mother of God.

Hymn 17—*Fourth Sunday in Lent (Third Tone)*

The Lord is king.

Thou hast created with power the immaterial world above, and in it hast thou established as stewards the orders of fiery spirits; we, therefore, praise thy boundless power.

Thou, who art absolutely rich, didst create the second world out of matter, and in the garden of Eden thou didst place the first man as a steward; we, therefore, praise thy boundless power.

Thou didst build thy church with a supreme purpose, and in it thou didst establish as stewards the preachers of the truth of thy Word; we, therefore, praise thy boundless power.

O thou tabernacle of the unlimited, the support of the supporter of the universe, who didst bodily give birth to God, who was begotten of the Father without body; therefore, intercede for us, O mother of God.

Hymn 18—*Fifth Sunday in Lent (Second Mode)*

The Lord is king.

O Christ, who hast committed to thy church a true commandment, always and unceasingly to pray to God in spirit and in mind.

Thou didst confirm the word of thy law in action, as an example to us, by spending the whole night in prayer to God in thy redemptive human nature; to thee all mankind bend the knee in worship.

Therefore, we also pray to thee, O Christ, grant us always to stand before thee in holy prayer like the spirits in heaven.

Աղաչանօք Աստուածածնին անապական քում ծընողին, զիմանալի աչքս սրբոյ մերոց բացցես ողորմութեամբ հայել ի լոյս քո Քրիստոս։

Շրկն. 19.—Զ. Կիրակէի Աղուհացից

ԲՁ.—Տէր թագաւորեաց.—Որ ըզխորհուրդ քո գալըստեանդ յառաջագոյն գուշակեցեր մարգարէիւքն Իսրայելի զորս ընտրեցեր յետ Մովսիսի, որք խօսեցան Հոգւով Սրբով բազմապատիկ օրինակօք. տուր մեզ Փրկիչ ողորմութիւն եւ ըզմեղաց ըզթողութիւն։

Ի մերձենալ ամաց վերջին զոր տեսանողքըն ծանուցին, ըզհասանել մեր փրկողիդ առ ի վախճան ժամանակին, երեւեցար ի մէջ մարդկան զգեցեալ ըզկերպ ծառայական. տուր մեզ Փրկիչ ողորմութիւն եւ ըզմեղաց ըզթողութիւն։

Ի վեցերորդ աւուր զԱդամ ստեղծեր ի տիպ քո տիրական, որ ոչ պահեալ ըզպատուիրանըն մերկացաւ ըզպատմուճանն. իսկ նոր Ադամդ ի վեց դարուն այց արարեր կորուսելոյն. տուր մեզ Փրկիչ ողորմութիւն եւ ըզմեղաց ըզթողութիւն։

Տաճար լուսոյ անբստուերի եւ առագաստ անճառ Բանին, որ ըզնախնոյ մօրն Եւայի բարձեր զանէծսըն տրրտմալի. հայցեա յՈրդւոյ քո միածնի՝ Հօր հաշտութեանըն միջնորդի, բառնալ ի մէնջ ըզխռովութիւն եւ տալ զոգւոց խաղաղութիւն։

Շրկն. 20.—Ծաղկազարդի

ԴԿ.—Տէր թագաւորեաց զվայելչութիւն զգեցաւ.

Անբսկիզբըն Բանըն Հօր որ ի վերայ քերովբէիցըն հանգչի, այսօր ի վերայ յաւանակի նորոյ նըստեալ. օ՛րհնեալ արքայ եկեալ անյաղթելի թագաւոր։

Through the prayers of the mother of God, thy saintly birthgiver, mercifully open thou the spiritual eyes of our hearts to behold thy light, O Christ.

Hymn 19—*Sixth Sunday in Lent (Second Tone)*

The Lord is king.

The mystery of thy second coming thou didst foretell through the prophets of Israel, whom thou hadst chosen after Moses, and who spake through the Holy Ghost in many and various parables; grant us, O Saviour, mercy and forgiveness of sins.

At the approach of the final years, which the seers had declared, when thou, our Saviour, wouldst arrive in the fulness of time, thou didst, indeed, appear among men, clothed in our servile form; grant us, O Saviour, mercy and forgiveness of sins.

On the sixth day thou didst create Adam in lordly form, who, nevertheless, by not keeping thy command, was divested of the (divine) robe; but thou, our new Adam, in the sixth dispensation, didst visit the lost one; grant, O Saviour, mercy and forgiveness of sins.

Temple of the unclouded light and bride-chamber of the inexpressible Word, who didst remove the sad curse on our first parent, Eve, pray to thine only-begotten Son, who is our advocate of reconciliation with the Father, to clear away from among us all turbulance, and to grant peace to our souls.

Hymn 20—*Palm Sunday (Fourth Mode)*

The Lord is king.

Eternal Word of the Father, that restest on the cherubim, this day didst thou sit upon a new colt; blessed is the king who cometh as an invincible sovereign.

Յառաջ քան զյաւիտեանս Որդին որ ի վերայ քառակերպիցըն բազմի, այսօր ի ծերոց եւ ի տղայոց փառատրեցաւ. օ՛րհնեալ արքայ եկեալ անյաղթելի Թագաւոր:

Եկայք նոր ժողովուրդք ընդ անմարմնոցն դասըս բազմութեան, ըզսա հընչմամբ երգով քաղցրը ձայնիւ փառատրեսցուք. օ՛րհնեալ արքայ եկեալ անյաղթելի Թագաւոր:

Շրկն. 21.—Աւագ Հինգշաբաթին

Ակ.—Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն.—

Այսօր կանգնեցաւ աւազան մըկըրտութեան ի Թողութիւն մեղաց մերոց:

Այսօր Տէրն մեր լըւանայր զոտս աշակերտացն եւ պատուիրէր զայս ասելով:

Մի ոմն ի ձէնջ եղբարք մատնելոյ է զիս ի մահ և որոշի յաշակերտացդ:

Զայն լուեալ Պետրոսի ակնարկէր առ Յովհաննէս՝ հարցանել թէ ով իցէ:

Բանըն զոր ասաց Յիսուս տըրտմեցոյց զիւր զաշակերտսն, եւ խռովեցան ամենեքեան:

Շրկն. 22.—Զատկի

Ակ.—Գովեա՛ Երուսաղէմ ըզՏէր.

Յարեաւ Քրիստոս ի մեռելոց. ալէլուիա:

Եկայք ժողովուրդք երգեցէք Տեառն. ալէլուիա:

Յարուցելոյն ի մեռելոց. ալէլուիա. որ զաշխարհս լուսաւորեաց. ալէլուիա:

Շրկն. 23.—Յարութեան Կիրակէից

Ակ.—Տէր Թագաւորեաց.

Զթագաւորըն փառաց Քրիստոս որ վասըն մեր

The Son, who was begotten before all times and is wont to sit upon the four-faced throne, is this day glorified by old men as also by children; blessed is the king who cometh as an invincible sovereign.

Come, O ye new people, let us join the host of angelic cohorts, and let us with resounding hymn and sweet voices glorify him; blessed is the king who cometh as an invincible sovereign.

Hymn 21—*Maundy-Thursday (First Mode)*

I will lift up mine eyes unto the hills: from whence cometh my help.

This day was established the laver of washing for the remission of sins.

This day did our Lord wash the feet of his disciples and declared saying:

One of you, O brethren, is about to betray me unto death, and is separated from you, my disciples.

On hearing that, Peter signified to John to ask who it was.

The answer which Jesus gave saddened the disciples, and they were all sorely agitated.

Hymn 22—*Easter Day (First Tone)*

Praise the Lord, O Jerusalem.

Christ is risen from the dead; Alleluia.

Come, O ye people, let us sing unto the Lord: Alleluia.

To him who is risen from the dead: Alleluia; who hath enlightened the world: Alleluia.

Hymn 23—*Resurrection Sunday I (First Tone)*

The Lord is king.

To Christ the king of glory, who for us became incarnate

մարմնացաւ ի սրբոյ Կուսէն՝ խաչի համբերելով. միաբանութեամբ երգով բարեբանեսցուք:

Որ զգթաղումն երեքօրեայ յանձն էառ՝ յարուցեալ ի մեռելոց իշխանութեամբ. միաբանութեամբ երգով բարեբանեսցուք:

Կարողապէս ըզդրունըս դըժոխոց խորտակեաց՝ եկեղեցւոյ իւրում զգեցոյց զմեծվայելչութիւն. միաբանութեամբ երգով բարեբանեսցուք:

Շրկն. 24.—Բ.

Ակ.—Տէր թագաւորեաց.

Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց, եւ լուսազարդեալ պայծառացոյց սուրբ զեկեղեցի. ժողովուրդք զՔրիստոս բարեբանեցէք:

Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ, քանզի չիջոյց զխայթոց մահու խաչիւն իւրով սըրբով. ժողովուրդք զՔրիստոս բարեբանեցէք:

Յարեաւ Աստուած եւ տիեզերք ամենայն նորափետուր զարդարեցան. եւ մանկունք հաղորդեցան մարմնոյ եւ արեան կենարարին. ժողովուրդք զՔրիստոս բարեբանեցէք:

Շրկն. 25.—Դ.

Բզ.—Տէր թագաւորեաց.

Թագաւորին յաւիտենից մատուսցուք զօրհներգութիւն, որ ի Կուսէն մարմնացաւ հաստատեաց զաշխարհս ի հաւատս անսասանելի. փա՛ռք նմա այժմ եւ յաւիտեան:

Որ կամաւ համբեր մահու խաչի Աստուած Բանն, եւ եհեղ զարիւնն իւր սուրբ ի փրկութիւն տիեզերաց. փա՛ռք նմա այժմ եւ յաւիտեան:

Աստուածապէս յարուցեալ ի նորափոր ի վի-

of the holy Virgin, enduring (the sufferings of) the cross: let us offer praise in united song.

To him who deigned to be buried for three days, and rose from the dead with might: let us offer praise in united song.

To him who with might crushed the gates of hell, and adorned his church in majesty: let us offer praise in united song.

Hymn 24—*II (First Mode)*

The Lord is king.

God reigned over the heathen, and hath embellished the holy church with heavenly light: O ye people, glorify Christ.

The Lord hath put on (glorious apparel) and hath girded himself with strength, because he hath destroyed the sting of death by his holy cross: O ye people, glorify Christ.

God is risen and the whole universe is adorned anew, and the children (of men) have partaken of the body and blood of the life-giver; O ye people, glorify Christ.

Hymn 25—*III (Second Tone)*

The Lord is king.

Let us render hymns of praise to the eternal king, who became incarnate of the Virgin, and confirmed the world in unshaken faith: glory be unto him now and ever.

To him who willingly endured the death of the cross, being as he was, God the Word, and shed his holy blood for the salvation of the universe: glory be unto him now and ever.

To him, who, with divine power, arose from the newly-

մէն, լուսազարդեաց զեկեղեցի իւր սուրբ ի փառս և ի գովեստ անուան իւրոյ. փա՛ռք նմա այժմ եւ յաւիտեան:

Շրկն. 26.—Դ.

Բկ.—Տէր թագաւորեաց.

Օրհնութիւն ի բարձունս՝ տնօրինեցելոյն ի կուսէն թագաւորին մերոյ. ալէլուիա, ալէլուիա:

Օրհնութիւն ի բարձունս՝ անսասանելի և հաստատուն յուսոյն մերոյ. ալէլուիա, ալէլուիա:

Օրհնութիւն ի բարձունս՝ անբաժանելի և միասնական սուրբ Երրորդութեանն. ալէլուիա, ալէլուիա:

Շրկն. 27.—Ե.

Գզ.—Տէր թագաւորեաց.

Զթագաւորքն Քրիստոս օրհնութեամբ երգով բարեբանեցէք ամենայն երկիր:

Արարողին երկնի եւ երկրի մատուսցուք երգով գոհաբանութիւն ամենայն երկիր:

Երրորդութեանն եւ մի աստուածութեանն մատուսցուք պատիւ երկրպագութիւն յաւիտեանս ամէն:

Շրկն. 28.—Զ.

Գկ.—Տէր թագաւորեաց.

Լուսով աստուածութեան քո Քրիստոս լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի. պահեա զսա անշարժ յաւիտեան:

Տօնէ այսօր Երուսաղէմ հաւատացելոց բազմութեամբ զնաւակատիս սուրբ եկեղեցւոյ. պահեա զսա անշարժ յաւիտեան:

Բացան դրունքք հաւատոյ նոր Սիովնի՝ ընդունել զանմահ փեսայդ յառագաստ. բաշխէ զմարմին քո եւ զարիւն. պահեա զսա անշարժ յաւիտեան:

hewn rock, and illuminated his holy church to the glory and praise of his name: glory be unto him now and ever.

Hymn 26—*IV (Second Mode)*

The Lord is king.

Blessing in the highest to him who, being born of the Virgin, was destined to be our king, alleluia, alleluia.

Blessing in the highest to him who is our unshaken and firm hope, alleluia, alleluia.

Blessing in the highest to the indivisible and united holy Trinity, alleluia, alleluia.

Hymn 27—*V (Third Tone)*

The Lord is king.

Let all the earth glorify Christ the king with a song of blessing.

Let all the earth offer to the creator of heaven and earth thanksgiving with song.

To the Trinity and one godhead let us render honor and worship for ever. Amen.

Hymn 28—*VI (Third Mode)*

The Lord is king.

By the light of thy godhead, O Christ, thou hast enlightened thine holy church; keep her steadfast for ever.

This day doth Jerusalem celebrate through the multitude of believers the dedication of thy holy church; keep her steadfast for ever.

New Zion's gates of faith have opened to receive thee, O immortal bridegroom, into her bride-chamber, in which thy body and blood are dispensed; keep her steadfast for ever.

Շրկն. 29.—Է.

ԴՁ.—Տէր թագաւորեաց.

Թագաւոր Քրիստոս, էակից Հօր եւ Հոգւոյն, որ վասն մեր մարմնացար ի սուրբ Կուսէն. թագաւոր փառաց Քրիստոս՝ քեզ փառք:

Որ կամաւոր մահուամբ ըզմահ մեռուցեր, եւ անապական յարութեամբըդ քո նորոգեցեր զաշխարհս. թագաւոր փառաց Քրիստոս՝ քեզ փառք:

Որ կենդանարար արեամբդ քո լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի. երգեմք քեզ ընդ հրեշտակս ասելով. թագաւոր փառաց Քրիստոս՝ քեզ փառք:

Շրկն. 30.—Ը.

ԴԿ.—Տէր թագաւորեաց.

Որ անբաւելի յաղթող զօրութեամբ թագաւոր ես երկնի եւ երկրի, Քրիստոս Աստուած. օրհնաբանեմք ըզքեզ:

Որ փառակցութեամբ ընդ Հօր վերօրհնիս յանմահից. եւ խոնարհեալ մարմին ըզգեցար փառաց թագաւոր. օրհնաբանեմք ըզքեզ:

Որ կարողապէս ըզմահ կոխեցեր. եւ յարուցեալ լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի, անմահ էութիւն. օրհնաբանեմք ըզքեզ:

Շրկն. 31.—Համբարձման Ա. Աւուր

ԱՁ.—Որ համբարձաւն այսօր աստուածային իշխանութեամբ ի հայրական ի կաուս, սպասաւորելով ի հրեշտակական դասուցն. որք նուագէին ասելով. համբարձէք իշխանք ըզդրունըս ձեր ի վեր, եւ մտցէ թագաւոր փառաց:

Հիացան վերնական իշխանութիւնքն եւ սոսկալի ձայնիւ աղաղակէին առ միմեանս. ով է սա թա-

Hymn 29—*VII (Fourth Tone)*

The Lord is king.

O king Christ, co-existent with the Father and the Spirit, who for us became incarnate of the holy Virgin; O glorious king, to thee be ascribed glory.

Who by thy voluntary death didst vanquish death, and by thine incorruptible resurrection didst renew this earth; O glorious king, to thee be ascribed glory.

Who by thy life-giving blood didst illuminate thine holy church; we therefore sing with the angels: O glorious king, to thee be ascribed glory.

Hymn 30—*VIII (Fourth Mode)*

The Lord is king.

Thou art infinite, victorious in might, king of heaven and earth, O Christ our God, we glorify thee.

Thou who, being co-equal in glory with the Father, art extolled by the immortals, yet thou didst humble thyself, king of glory as thou art, by taking human body; O glorious King, we glorify thee.

Thou who with might didst trample death, and rising (from the dead) thou didst illuminate thine holy church; O immortal Being, we glorify thee.

Hymn 31—*Ascension I (First Tone)*

This day he ascended up by divine power in his Father's chariot, being ministered unto by the angelic orders, who celebrated and sang: Lift up your gates, O ye princes, and the king of glory shall enter.

The heavenly powers were amazed and with terror-stricken voices cried aloud one to another: who is this king of glory

գաւոր փառաց՝ եկեալ մարմնով եւ սքանչելի զորութեամբ. համբարձէք իշխանք ըզդրունսս ձեր ի վեր, եւ մտցէ թագաւոր փառաց:

Եղանակէին վերնական պետութիւնքդն հրաշալի ձայնիւ, երգէին երգ նոր ասելով. սա ինքն է թագաւոր փառաց, փրկիչ աշխարհի, եւ ազատիչ ազգի մարդկան. համբարձէք իշխանք ըզդրունսս ձեր ի վեր, եւ մտցէ թագաւոր փառաց:

Շրկն. 32.—Համբարձման Բ. Աւուր

Դկ.—Որ ողորմութեամբ քո հիմնեցեր զաշխարհս, եւ իջեալ փրկեցեր ի յանիծից Ադամայ. այսօր համբարձար փառօք յերկինսս Տէր ողորմեա՛ մեզ Աստուած:

Որ ելեր ի բարձրագիտակ քառաթեւին՝ առնելով զհեծելութիւն փրկութեան. այսօր համբարձար փառօք յերկինսս Տէր ողորմեա՛ մեզ Աստուած:

Որ երեքօրեայ թաղմամբ քո դատապարտեցեր ըզդաւաճանող վիշապն. այսօր համբարձար փառօք յերկինսս Տէր ողորմեա՛ մեզ Աստուած:

Շրկն. 33.—Համբարձման Գ. Աւուր

Դկ.—Իշխանութիւնք երկնից զարհուրեցան տեսանելով զելսս քո Քրիստոս. ընկեր առ ընկեր սարսեալ ասէին՝ ո՞վ է սա թագաւոր փառաց:

Սա է մարմնացեալ Բանն Աստուած որ ի խաչին ըզմեղս ըսպան. եւ վերասլացեալ փառօք գայ յերկինսս, Տէր հրզօր զօրութեամբ իւրով:

Սա է որ ի գերեզմանէն յարեաւ եւ աւերեաց ըզդըժոխս, եւ վերհամբարձեալ փառօք գայ առ Հայր, Տէր կարօղ ի պատերազմի:

that cometh in body and with marvellous power: Lift up your gates, O ye princes, and the king of glory shall enter.

The heavenly dominions made melody in a wonderful voice, singing a new song and saying: he is himself the king of glory, the saviour of the world and redeemer of the human race: Lift up your gates, O ye princes, and the king of glory shall enter.

Hymn 32—*Ascension II (Fourth Mode)*

Thou who in mercy built this earth and came down to save us from the curse of Adam; on this day thou didst ascend again with glory into heaven: O Lord God, have mercy upon us.

Thou didst ride upon the four-winged gibbet, equestrian-like, to grant us salvation; on this day thou didst ascend again with glory into heaven; O Lord God, have mercy upon us.

By thy three days' burial thou didst condemn the deceiving serpent; on this day thou didst ascend again with glory into heaven; O Lord, have mercy upon us.

Hymn 33—*Ascension III (Fourth Mode)*

The heavenly powers were amazed on beholding thy ascent, O Christ, and with trembling said one to another: Who is this king of glory?

This is the incarnate word of God, who upon the cross destroyed sin, and soaring up with glory, cometh into heaven as Lord, strong and mighty.

This is he who arose from the grave and destroyed hell, and, ascending up on high with glory, cometh to the Father as Lord, mighty in battle.

Շրկն. 34.—Երկրորդ Ծաղկազարդին

Դշ.—Զգալուստ քո Քրիստոս այսօր յԵրուսաղէմ նոր՝ եկեղեցի սուրբ յաղթական երգով բարեբանեմք. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Որ վասըն մերոյ փրկութեան յաւանակի նըստիլ յանձն առեր, ընդ մանկունսըն բարեբանեմք. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա՛, եւ զերկրպագուս անուանըդ քում պահեա՛ ի խաղաղութեան:

Շրկն. 35.—Հոգւոյ Գալստեան Ա.

Բշ.—Որ ի հարաշարժ ի յաղբերէն յառաջ բըղխեալ անհատաբար ի յՈրդւոյ տիրապէս Սուրբ Հոգին այսօր ի յերկնից սաստիկ հեղեալ ի դասս առաքելոցըն լըցուցիչ բոլորից. ըզնա օրհնեսցուք երկրպագելով:

Որ յանըսկիզբն եւ ի միշտ յէէն նոյնագոյ բնութեամբ անորիչ բաժանմամբ ի յՈրդւոյ՝ արարչակից Սուրբ Հոգին այսօր հրով բաժանեալ լեզուս քարոզիցն՝ ի լոյս ածեալ զազգըս մարդկան բաժանմամբ պէս պէս չնորհաց. ըզնա օրհնեսցուք երկրրպագելով:

Որ ի վերայ ջուրցըն գոլով գոյացոյց զարարածս. անանջրրպետն ի Հօրէ և յՈրդւոյ՝ իշխանակից Սուրբ Հոգին այսօր վերածնեաց զազգս ամենայն ջրոյ կենդանւոյ բըղխեալ յԵրուսաղէմ, ըզնա օրհնեսցուք երկրրպագելով:

Շրկն. 36.—Հոգւոյ Գալստեան Բ.

Դշ.—Կենդանարար Աստուած, մարդասէր Հոգի, ըզժողովեալսըն միաբանական սիրով լուսաւորեցեր հրեղինօք լեզուօք, վասն որոյ եւ մեք այսօր տօնեմք ըզգալուստ քո սուրբ:

Hymn 34—*Second Palm Sunday (Fourth Tone)*

Thy entrance this day, O Christ, into New Jerusalem, the holy church, we glorify in triumphant song: Blessed is he that cometh in the name of the Lord.

To thee who, for our salvation, didst deign to sit upon a colt, we tender praise with the Hebrew children: Blessed is he that cometh in the name of the Lord.

Heavenly king, keep thy church immovable, and the worshippers of thy holy name preserve in peace.

Hymn 35—*Penticost I (Second Tone)*

The Holy Ghost, who truly proceedeth from the Father as the source of all and is co-eternal with the Son, this day was mightily poured upon the company of the apostles, filling them all with spiritual gifts; we bless him and worship him.

Proceeding from the unoriginated and eternal Jehovah, of the same substance, and indivisible and yet distinct from, the Son, the co-creator Holy Ghost, this day, dividing the tongues of the preachers with fire, brought to light the nations of the earth by the distribution of manifold gifts; we bless him and worship him.

Like as in the beginning, brooding over the waters, he brought to being all the creatures, so also this day the Holy Ghost, who is inseparable from the Father and the Son and is joint-ruler with them, did regenerate all nations by means of the living water which, through him, gushed forth in Jerusalem; we bless him and worship him.

Hymn 36—*Pentecost II (Fourth Tone)*

O life-giving God and man-loving Spirit, thou didst illuminate with fiery tongues the disciples, who were assembled in loving union; therefore, we celebrate to-day thy holy advent.

Զուարճացան քո զալըստեամբըն սուրբ առաքեալքն, կոչելով ի միասին ըզցրրուեալսն ի միմեանց բազմաձայն լեզուօք, վասն որոյ եւ մեք այսօր տօնեմք ըզգալուստ քո սուրբ:

Հոգեւորական սուրբ մըկըրտութեամբ՝ զարդարեցեր նոքօք ըզտիեզերս ի զգեստս լուսափայլս և նորափետուրս. վասն որոյ եւ մեք այսօր տօնեմք ըզգալուստ քո սուրբ:

Շրկն. 37.—Հոգւոյ Գալստեան Գ.

ԲԶ.—Սարսափելի հողմայ նըման ահեղագոչ սաստիկ հընչման, երեւեցար ի վերնատանն Հոգիդ՝ դասուն երկոտասան, որք առ ի քէն մըկըրտեցան որպէս զոսկի՝ հրով մաքրեցան. մաքրեա՛ ի մէնջ զմէջ մեղաց եւ ըզգեցո ըզլոյս փառաց:

Եկիր յերկիր աստուածաբար՝ դատել զաշխարհս իշխանաբար. 'նդ արդարութեան եւ ընդ մեղաց եւ ընդ չարին դատաստանաց, բացեր ըզգանձդ անհիւթական պարգեւս ետուր որդւոց մարդկան. մաքրեա՛ ի մէնջ ըզմէջ մեղաց և ըզգեցո ըզլոյս փառաց:

Մէրն ի սիրոյ զսէրդ առաքեաց, յինքըն զանդամս իւր քև յօդեաց, զնկեղեցի իւր զոր չինեաց եօ՛թըն սեամբ քո հաստատեաց. տընտես ի նմա եդ զառաքեալսն եօթնեակ չնորհօք քո զարդարեաց. մաքրեա՛ ի մէնջ ըզմէջ մեղաց եւ ըզգեցո ըզլոյս փառաց:

Շրկն. 38.—Դ.

ԲԿ.— Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս նորոգման. քանզի նորոգողն էից՝ Հոգին էջ ի սուրբ վերնատանն, որով նորոգեցան դասք առաքելոցն:

The holy apostles were overjoyed at thy advent and called together all those who were separated from one another by reason of the multitude of tongues; we therefore celebrate to-day thy holy advent.

With spiritual and holy baptism thou didst adorn through them the universe with resplendent new garments; we therefore celebrate to-day thy holy advent.

Hymn 37—*Pentecost III (Second Tone)*

Like a rushing mighty wind with a roaring impetuous sound, thou, O Spirit, didst appear in the upper-chamber to the company of the twelve, who received thy baptism and were, like gold, refined with fire; purge away from us the mist of sin, and clothe us with the light of glory.

O Holy Ghost, who descendedst upon earth as God to judge the world with authority, to reprove it of sin, and of righteousness, and of judgment of the evil one, thou didst disclose thy immaterial treasure by conferring thy gifts upon the children of men; purge away from us the mist of sin, and clothe us with the light of glory.

He, who is eminently love, from him who is the supreme author of love, did send thee, who art truly love, and joined his members together through thee, and with the seven pillars did he establish the church which he had erected, in which he had placed the apostles as stewards, adorning them with thy sevenfold graces; purge away from us the mist of sin, and clothe us with the light of glory.

Hymn 38—*Pentecost IV (Second Mode)*

This day the heavenly beings rejoiced at the regeneration of us, earth-born mankind; for, on this day, the Holy Ghost, the regenerator, descended (on earth) in the upper chamber, and regenerated the company of apostles.

Այսօր հոգանիւթեայ բնութիւնս ցընծայ ընդ Հօր հաշտութեան. քանզի որ երարձ զՀոգին ի մարդկանէ՝ մարմին եղելոց՝ դարձեալ վերըստին ըզնոյն պարգեւէ:

Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցնծութեամբ զգալուստ Սուրբ Հոգւոյն, որով զարդարեցան ի զգեստըս լուսափայլս եւ գերապայծառս, երդեն ընդ արովբէսն զերեքսբրբենին:

Շրկն. 39.—Ե.

ԴՀ.—Որ ի վերայ բըղխեալ գաւազանին Յեսսեայ հանդերձեալ եօթնարփեռն շնորհօք, Հոգի Աստուծոյ եւ խորհրդոյ, Հոգի հեզութեան և զօրութեան, Հոգի իմաստութեան եւ գիտութեան, Հոգի երկիւղի աստուածպաշտութեան, աղաչեմք շնորհեա եւ մեզ ողորմութեամբ ի քոց պարգեւաց:

Որ զգուշակեալըն քո Եսայեաւ ելից օծեալն ի քէն մարմնով. ասէ՝ Հոգի Տեառն ի վերայ իմ, զոր ի տնօրէնութեանըն խոնարհութեամբ ընթերցեալ որ վասն իւր զբան մարգարէին. աղաչեմք շնորհեա եւ մեզ ողորմութեամբ ի քոց պարգեւաց:

Որ զառաքումն առ ի Հօրէ եւ ի Հոգւոյդ Բանին յաշխարհ՝ մարգարէիւրն ծանուցեր, զոր ի դիմաց մարդացելոյն բարբառէր առ մարդկութիւնս Տէր Տէր առաքեաց զիս և Հոգի նորա. աղաչեմք շնորհեա եւ մեզ ողորմութեամբ ի քոց պարգեւաց:

Շրկն. 40.—Զ.

Դզ.—Առաքելոյ աղաւնոյ, իջանելով մեծաձայն հընչմամբ ի բարձանց. ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց անկիզելի զաշակերտսն, մինչ դեռ նըստէին ի սուրբ վերնատանն:

This day our earthly nature is gladdened at its reconciliation with the Father; for he who had erst taken away the divine spirit from men on account of their yielding to the flesh, has on this day granted us the same anew.

This day the children of the church celebrate the advent of the Holy Ghost, by whom they have been clothed in luminous and transcendent garments, and sing the trisagion with the seraphim.

Hymn 39—*Pentecost V (Fourth Tone)*

O Holy Ghost, who didst rest with thy sevenfold gifts upon him who came forth from the stem of Jesse, thou Spirit of God and of counsel, who art the spirit of humility and of power, the spirit of wisdom and understanding, the spirit of fear of the Lord and of godliness; we pray thee, mercifully to grant us also of thy gifts.

O Holy Ghost, whose foretelling through Isaiah was fulfilled by him who was anointed by thee in the flesh when he declared, the Spirit of the Lord is upon me, which passage of the prophecy concerning himself he read with humility during his redeeming dispensation; we pray thee, mercifully to grant us also of thy gifts.

O Holy Ghost, who didst announce through the prophet the sending of the Word by the Father and the Spirit, proclaiming to mankind on behalf of the incarnate one, Behold Lord God and his Spirit have sent me; we pray thee, mercifully to grant us of thy gifts.

Hymn 40—*Pentecost VI (Fourth Tone)*

The missive Dove, descending from above with a mighty sound, in the form of a resplendent light, inflamed without consuming the assembled disciples in the holy upper-chamber.

Աննիւթական աղաւնի, անքննելի որ քննէ զվսորս Աստուծոյ, զոր առեալ ի Հօրէ պատմէ զահաւոր եւ զմիւսանգամ գալուստն, զոր քարոզեցին համագոյական:

Օրհնութիւն ի բարձունս, ելողին ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ, որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն, եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

Շրկն. 41.—Վարդավառին

ԴԿ.—Ուրախացիր պըսակ կուսից, Տիրամայր, այսօր Որդին քո զհայրենի փայլեաց զփառս. Նըմա յաւէժ յանձն արա զանձինըս մեր:

Նըմա Մովսէս եւ Հեղիաս սպասեն. յանուն նորա ցընծան Թաբոր և Հերմոն. Նըմա յաւէժ յանձն արա զանձինըս մեր:

Եսայիաս ըզքեզ թեթեւ ամպ ետես, եւ Հայր յամպոյն զքո զՈրդին իւր դաւանեաց. Նըմա յաւէժ յանձն արա զանձինըս մեր:

Շրկն. 42.—Վերափոխման

ԲԶ.—Մեծացուսցէ. Անթառամ ծաղիկ, անդատապարտ շառաւիղ. վերաբուսեալ յարմատոյն Յեսսեայ. զքեզ Եսայիաս կանխաւ վերագոչեաց եօթնարփին շնորհաց Հոգւոյն ընդունարան գոլ. Աստուածածին եւ կոյս, զքեզ մեծացուցանեմք:

Համեղաճաշակ պըտղոյն բանաւոր բարունակ. յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անսպառ յուրախութիւն տըրտմեցելոց ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան. Սրբուհի անարատ, ամենեքեան զքեզ մեծացուցանեմք:

Քաղաքավարեալ ի մարմնի անարատ վարուք. այսօր յառաքելոցն ամփոփեալ. վերին ակնարկութեամբն վերափոխեցար յարքայութիւն Որդւոյ քո

Dove immaterial, who, being himself unsearchable, yet searches the secrets of God, and, with knowledge obtained from the Father, relates the majestic second coming, concerning which the disciples preached throughout the world.

Blessing in the highest to the Holy Ghost, who proceedeth from the Father, through whom the apostles themselves, being filled with the immortal cup, invited the earth into heaven.

Hymn 41—*Feast of the Transfiguration (Fourth Mode)*

Rejoice, O mother of our Lord, crown of Virgins, today thy Son shone forth in his paternal glory; commend our souls unto him at all times.

Moses and Elijah do attend him this day, Tabor and Hermon rejoice in his name; commend our souls unto him at all times.

Isaiah beheld thee as a swift cloud, and (to-day) the Father from the cloud acknowledged him as his Son; commend our souls unto him at all times.

Hymn 42—*Assumption of the Blessed Virgin (Second Tone)*

My soul doth magnify the Lord, and my spirit hath rejoiced in God my Saviour.

Hail, unfading flower, guiltless scion, sprung up from the root of Jesse; Isaiah had aforetime proclaimed thee as the recipient of the sevenfold divine gifts of the Spirit: O mother of God and virgin, we magnify thee.

Hail, reasonable bough of the savoury fruit, from which was harvested for us the exhaustless cluster of grapes to cheer us, who were distressed by the taste of the tree of knowledge: O holy lady, with one accord we magnify thee.

Hail, holy virgin, who didst lead a blameless life in the flesh, having been on this day shrouded by apostolic hands, thou wast, at heaven's behest, translated to the kingdom of

եւ Աստուծոյ մերոյ, բարեխօս խոստովանողացս, զքեզ մեծացուցանեմք:

Շրկն. 43.—Էջմիածնի

Դկ.—Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նըմա. ձայնք հընչեցին սանդարամետք անդընդոց:

Տեսեալ ըզլոյս մեծ հայրապետին Գրիգորի, պատմէր ցընծութեամբ հաւատացեալ արքային:

Եկայք շինեսցուք սուրբ ըզխորանըն լուսոյ. քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

Շրկն. 44.—Խաչվերացի

Գկ.—Տէր Թագաւորեաց.—Ցաղթող եւ զնոր օրհնութիւն միշտ ի բարձունս երգեսցուք Թագաւորին Քրիստոսի, հաւատացեալ ժողովուրդք:

Որ եկն ի լուսաւորել զընտրեալ սուրբ զեկեղեցի, եւ պըսակեաց սուրբ խաչիւն նըմա ըզփառս երգեսցուք:

Այսօր եւ մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ խաչին, եւ փըրկողին մատուցցուք փառք եւ պատիւ յաւիտեան:

Շրկն. 45.—Վարագայ Խաչին

Գզ.—Քեզ Քրիստոսի կաթուղիկէ եկեղեցւոյ չնորհողի, զյաղթական ըզպատուական զաստուածընկալ սուրբ նըշանս, մատուցանեմք զօրհներգութիւն միշտ ի բարձունս:

Սա կամաւ քո Քրիստոս թեւօք ամենազօր Սուրբ Հոգւոյն, եւ դասուք հրեշտակաց թռուցեալ եկաւորի, ի լեառըն Վարագայ բընակիլ ի նմա:

Եկայք ժողովուրդք՝ երկրպագեսցուք աստուածային սուրբ նըշանիս. համբարձէք միաբան ըզձեռս ձեր ի սըրբութիւն, եւ ըզբնակեալն ի սմա միշտ փառաւորեսցուք:

thy Son and our God: O intercessor of penitents, we magnify thee.

Hymn 43—*Etchmiatzine (Fourth Mode)*

The Lord is king.

The only-begotten Son descended from the Father, and the light of glory was with him; the depths of hades thundered forth in great tumult.

The venerable father Gregory, on beholding that great light, joyfully related the vision to the faithful king.

Let us then build (here) a holy sanctuary in honor of the Light of the world, for hereat shone forth the (heavenly) light upon us in the land of Armenia.

Hymn 44—*Exaltation of the Cross (Third Mode)*

O faithful people, let us incessantly send up a new and triumphant song of praise to Christ the king.

To him who came to illuminate his chosen holy church, and crowned her with the holy cross, let us sing praises.

Thus shall we this day celebrate the festival of the holy cross, and offer unto the Redeemer glory and honor for ever.

Hymn 45—*The Cross of Varag (Third Tone)*

Unto thee, O Christ, who hast granted to the Catholic church the triumphant, honorable, and God-accepted holy cross, we continually offer the song of glory.

This cross at thy behest, O Christ, flying with the wings of the all-powerful Holy Ghost, accompanied by hosts of angels, descended on mount Varag in order to dwell thereon.

Come, O ye people, let us bow down before this divine and holy sign, lifting up our hands unitedly in holiness and glorifying him who dwells therein.

Շրկն. 46.—Գիւտ Խաչի

ԲՁ.—Այսօր խընդրի պատուական փայտ խաչին աւանդեալն ի Գողգոթա ի ձեռն աստուածասէր դըշխոյին. եկայք հաւատացեալք երկըրպագեսցուք աստուածային սուրբ նշանիս:

Այսօր ընծայէ Գողգոթա ըզծածկեալն ի յերկրի վերաբերեալ անուշահոտ խընկովք ի ձեռն երանելւոյն Յուդայի. եկայք հաւատացեալք երկըրպագեսցուք աստուածային սուրբ նըշանիս:

Այսօր ի ձեռըն փըրկական սուրբ խաչին կենագործի պատանին մեռեալ, եւ ողբայ սատանայ ըզկործանումն իւր. իսկ մեք Քրիստոսի հաւատացեալք երկըրպագեսցուք աստուածային սուրբ նըշանիս:

Շրկն. 47.—Սրբոց Վարդանանց

ԴԿ.—Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց.

Արեգակն արդարութեան ի Հայաստան ծագեալ՝ պայծառացուցեր սուրբ զեկեղեցի հեղմամբ արեան սըրբոցն. մաղթանօք սոցա խընայեա՛ ի մեզ պարգեւատու բարեաց, եւ ողորմեա քո արարածոց:

Պանծալի սուրբ դաւակօք հովիւքըն զըւարթունք, հրով Հոգւոյն չիջուցին ըզբոցն ըզկրակապաշտ պարսիցն. մաղթանօք սոցա խընայեա՛ ի մեզ պարգեւատու բարեաց, եւ ողորմեա քո արարածոց:

Պարթեւական տեսանողին յառաջագոյն ազդեցութեամբ, զհաւատոյ որդիս սըրբոյն Գրիգորի պըսակազարդ տեսեալ. մաղթանօք սոցա խընայեա՛ ի մեզ պարգեւատու բարեաց, եւ ողորմեա քո արարածոց:

Hymn 46—*The Finding of the Cross*

This day the precious wood of the cross committed unto Golgotha is sought by the godly queen; come, O ye faithful, let us bow down before this divine and holy symbol.

This day Golgotha presents that which had been concealed in the earth and is brought forth with the fragrance of sweet-smelling incense by the hand of the blessed Judas; come, O ye faithful, let us bow down before this divine and holy symbol.

This day through the saving holy cross the youth that was dead is restored to life, and Satan laments his discomfiture; but we believers in Christ will bow down before this divine and holy symbol.

Hoymn 47—*Feast of the Holy Vardans (Fourth Mode)*

I am well pleased that the Lord hath heard the voice of my prayer.

O sun of righteousness shone forth in Armenia, thou didst adorn thy holy church by the shedding of the blood of thy saints, through their prayers spare us, thou giver of (all) good things, and have mercy upon thy creatures.

Together with their illustrious and holy children, those watchful shepherds quenched the flames of the fire-worshiping Persians; through their prayers spare us, thou giver of (all) good things, and have mercy upon thy creatures.

Impelled by the prophetic inspiration of the Parthian seer, St. Gregory's children of the faith have adorned themselves with crowns of martyrs; through their prayers spare us, thou giver of all good things, and have mercy upon thy creatures.

Շրկն. 48.—Պահոց եւ Հանգստեան

Դկ.—Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք. գովեցէք զնա ամենայն ժողովուրդք:

Փառաբանութիւն առաքեմք քեզ Հայր երկնաւոր. յիշեա՛ զնընչեցեալսըն մեր եւ հանգո ընդ սուրբըս քո:

Որ էակիցդ ես Հօր եւ Հոգւոյ Որդիդ միածին. յիշեա զնընչեցեալսըն մեր եւ հանգո ընդ սուրբըս քո:

Որ փառակիցդ ես Հօր եւ Որդւոյ Հոգիդ ճըշմարիտ. յի՛շեա՛ զնընչեցեալսըն մեր եւ հանգո՛ ընդ սուրբըս քո:

Շրկն. 49.—Սուրբ Հաղորդութեան

Վերաձգողն երկնից մըշտընչենաւոր Հօր Որդին, ներգործեալ իմովս ի վեր քան ըզհրաշս. ծառայի առեալ ըզկերպ անկողոպտելի աստուածութեամբն:

Բանին զմաքրեցելոցն ջրով զոտըս լըւանայ, զի զիսոնարհութիւն ի նոսա տըպաւորեսցէ. Երրորդութեանն գոլ օթեվան:

Բաշխէ զմարմին իւր եւ զարիւն ը նոր ուխտ անուանեալ եւ յիշատակ կամաւոր մահուան մերձեցելոցս ի նա սրբութեամբ:

Որ մարմնով եւ արեամբ քո ցուցեր զթողութիւն մեզաց, որ ը միշտ պատարագիս ի մեզ անծախապէս. մաքրեա ի մէնջ զմէգ խաւարին խորհրդոյ եւ լուսաւորեա զմեզ:

Որ քաւիչ զայս նոր ուխտ ցուցեր յետ առաջնոյ քո՝ մահացելոցս ի ճաշակմանէ նախահօրն. մաքրեա ի մէնջ զմէգ խաւարին խորհրդոյ եւ լուսաւորեա զմեզ:

Hymn 48—*Fast Days and Requiem (Fourth Mode)*

O praise the Lord, all ye nations; praise him, all ye people.

Words of praise we offer up unto thee, O heavely Father; remember thou our departed brethren, and grant them rest with thy saints.

O thou only-begotten Son, who art co-existent with the Father and the Holy Ghost; remember thou our departed brethren, and grant them rest with thy saints.

O Spirit of truth, who art glorified with the Father and the Son; remember thou our departed brethren, and grant them rest with thy saints.

Hymn 49—*Holy Communion*

The spreader of the expanse of heaven, the eternal Son of the Father, performed in my (human) nature a greater marvel by assuming the form of a servant with godhead inviolate.

He washed with water the feet of his disciples, whom he had already cleansed through his word, in order to imprint in them humility, and to make them fit habitation for the Trinity.

As a new covenant, and in memory of his voluntary death, Christ distributes his body and his blood amongst those of us who approach him in holiness.

O thou, who through thy body and blood didst make known to us the forgiveness of sins, and who art continually being offered up among us without being consumed; clear away from us the mist of dark musings and enlighten us.

O thou, who hast appointed this new covenant for expiation of sins, in place of the former one, for the salvation of us, who have become mortal through the tasting of the forbidden fruit by our first parent; clear away from us the mist of dark musings and enlighten us.

Որ կազմեցեր սեղան խորհրդոյ եւ արբուցեր յանմահական բաժակէն սրբոց քոց առաքելոց այսօր ի սուրբ վերնատունն, աղաչեմք Փրկիչ ողորմեա:

Մաքրեա զմիտս եւ զխորհուրդս զի եւ մեք հաղորդեսցուք սրբութեամբ ընդ սրբոց քոց առաքելոց այսօր ի սուրբ վերնատունն, աղաչեմք Փրկիչ ողորմեա:

Բան Հօր եւ քահանայապետ ճշմարիտ, որ զաշխարհակեցոյց զմարմին եւ զարիւնդ քո բաշխեցեր յառաքեալսն. այսօր հաղորդին հողեղէնք աստուածային խորհրդոյդ, Որդի Աստուծոյ ողորմեա:

Այսօր վերըստին նորոգեցաք ի յանիծից նախահօրն. ճաշակելով զմարմին եւ զարիւն Որդւոյն Աստուծոյ. օրհնեցէք զնա հողևոր երգով:

O Saviour who didst ordain this sacred board and didst give on this day thy holy apostles in the upper-chamber to drink of the cup of immortality; we pray thee have mercy upon us.

O Saviour, purify our minds and thoughts that we may have communion in holiness with thy holy apostles who on this day were assembled in the upper-chamber; we pray thee have mercy upon us.

Word of the Father and true highpriest, who didst divide thy world-redeeming body and blood among the disciples, so also this day thy earth-born creatures are partaking of thy divine sacrament; O Son of God, have mercy upon us.

This day we have been released from the curse of our first parent by tasting of the body and blood of the Son of God. Praise him with a spiritual song.

ՄԵՂԵԴԻՔ

Ծննդեան եւ Աստուածածնի

Նոր ծաղիկ այսօր բղխէ յարմատոյն Յեսսեայ. եւ դուստրը Դաւթի ծնանի զՈրդին Աստուծոյ:

Տեառնընդառաջին

Քրիստոս փառաց թագաւորն այսօր եկեալ յընծայումն. Կատարելով նա զօրէնս քառասնօրեայ գալստեամբ:

Ծաղկազարդին

Աստ երբայեցւոց մանկունքն զերգ քերովբէիցն առեալ. Հեթանոսական դասուց տօնակից վեհիցն եղեալ:
Յիսուս Քրիստոս եմուտ այսօր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ ովսաննա երգով:

Յարութեան

(1) Այսօր մեռեալք ընդ կենդանեացս ձայնեն աւետիս՝ Քրիստոս յարեաւ:

(2) Յարեաւ Փրկիչն աշխարհի եւ աղատեաց զազգս մարդկան ի մահուանէ։

(3) Տօնեմք զքո յարութիւնդ (համբարձումնդ, Ս. Գալուստդ եւայլն)։

(4) Ի կոյս վիմէն յարեաւ այսօր և զգերեալսն ի գերողէն ազատեաց։

Եւ ձայն զառիւծուն ասեմ,
Որ գոչէր ի քառաթեւին,
Ի քառաթեւին գոչէր.
Ձայն առնէր ի սանդարամետոն:
Յարեաւ փառաց թագաւորն, աւետիս.
Զի՞ խնդրէք զանմահն ընդ մեռեալս. ձեզ եւ մեզ մեծ աւետիս:

ANTHEMS (MEGHETI)

Christmas and Feasts of the Holy Virgin

A new flower is sprung up this day from the root of Jesse, and the daughter of David brings forth the Son of God.

Purification

Christ the king of glory comes this day to be presented(to the Lord): he fulfills the law by his advent on the fortieth day (after his birth).

Palm Sunday

Here (on earth) the children of the Hebrews take up the song of the cherubim: and the choirs of the gentiles join in celebration with the angels above.

On this day did Jesus Christ enter the holy city of Jerusalem with the song of hosanna.

Easter-Tide

To-day the dead with the living sing the tidings: Christ is risen.

The Saviour of the world is risen and has redeemed from death the human race.

We celebrate thy resurrection (ascension, advent, etc.)

From virgin rock he arose to-day, and the captives he delivered from the hands of the captors.

I declare with the voice of the lion, which thundered through the four-winged angel; he thundered through the four-winged angel and resounded in the infernal regions.

The king of glory is risen: Rejoice!

Why do ye seek the immortal among the dead? Rejoice!

Good news for you and for us!

Այսօր նոր արեւ յարեալ
Ի նորահրաշ արեգակէն (կրկնեա) ։
Այսօր նոր շուշան ծաղկեալ
Ի նորատունկ բուրաստանէն ։

Համբարձման

Այսօր անդրանիկ Հօր միածին Որդին.
Ցերկինս սլանայ ադամային կերպիւ ։
Նուագ ներբողից եղանակեն այսօր
Հոյլք հոգեղինաց երկնաւորացն խմբից ։

Հոգւոյ Գալստեան

Նուագեմք Հոգւոյն նուագս վայելուչս ։
Վայելուչս բանիւ զարարչութիւնն նախ ասեմք ։

Վարդավառին

Գոհար վարդն վառ առեալ, (կրկնեա)
Ի վեհից վարսիցն արփենից.
Ի վեր ի վայր վարսիցն ։
Պղպջէր ծաղիկ ծովային ։ (Կրկնեա)
Լեառըն ցընծա՛ դու, Թաբոր,
Յարփիահրաշըս տօնի,
Քան զՍինա բարձրացար,
ԶԱստուած փառօք ընկալար ։

Փոխմանն

Այսօր Գաբրիէլ հրեշտակապետն եկեալ,
Բերեալ զբարիոն պսակ յաղթող Կուսին ։
Այսօր կոչելով առ բոլորիցն Տէրն
Զտաճար բարձրելոյն և զբնակարան Հոգւոյն ։

Աչքըն ծով ի ծով ծիծաղախիտ
Ծաւալանայր յառաւօտուն՝
Երկու փայլակնաձեւ արեգական նման ։

On this day the marvellous Sun (of righteousness) shone forth its light anew.

On this day in the newly-planted flower-garden the lily bloomed.

Ascension

This day the first-born of the Father, the only-begotten Son, soars into heaven in Adamic form: vast multitudes of heavenly spirits unite in songs of praise.

Pentecost

We address the Holy Spirit in appropriate songs: in befitting words we extol first his creating power.

Transfiguration

The precious rose resplendent *(repeat)*
From sublime celestial rays,
Effulgent throughout the ether,
Bursting forth the flower of the sea *(repeat)*.

Rejoice thou, O Mount Tabor, on this brilliant festival. Thou hast risen above Sinai, having received God in glory.

Assumption

On this day the archangel Gabriel brings the victor's crown, a prize to the triumphant Virgin.

She, the temple of the Highest, and the abode of the Spirit, is this day called unto the Lord of all.

The twinkling eyes from sea to sea shone forth at break of day like two glittering suns.

Խաչին

Խաչն ի նախնումն երևեցաւ,
Ծաղկեալ ի դրախտն աստուածատունկ,
Մխիթարիչ եղև Սէթայ,
Նախագուշակ հօրն Ադամայ։
Մեք ի յայն փայտ եմք յուսացեալ՝
Զոր Տէր Յիսուս բեւեռեցաւ,
